ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ ՀԱՄԼԵՏԻ

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՍՀՄ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (1922–1991 թթ.)

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

## ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2015



© National Library of Armenia OCR by Portmind

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մինասյան Է. Գ.**

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Աբրահամյան Հ. Մ.**

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մանուկյան Ա. Ս.**

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի ազգային արխիվ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. դեկտեմբերի 28–ին, ժամը $14^{00}$–ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ–ի «Հայոց պատմության» 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. նոյեմբերի 27–ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, պ. գ. թ., դոցենտ Մուրադյան Հ. Ղ.



© National Library of Armenia

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:** Հայոց նորագույն ժամանակաշրջանի պատմության մեջ Հայաստանի երկրորդ (խորհրդային) հանրապետությունն ունի իր ուրույն տեղն ու դերը: Խորհրդային Հայաստանը հանդիսացավ Հայաստանի առաջին հանրապետության իրավաժառանգորդը, խորհրդային ամբողջատիրության պայմաններում իր հնարավորությունների չափով 70 տարիների ընթացքում պահպանեց և զարգացրեց հայոց պետականությունը: Անկախ նրանից, թե կոմունիստական վարչակարգն ինչ չարիքներ է գործել խորհրդային բոլոր ժողովուրդների, այդ թվում հայության նկատմամբ, խորհրդային տարիները մեր ժողովրդին տվել են նաև շատ դրական արժեքներ: ԽՍՀՄ կազմում հայ ժողովուրդը պաշտպանված էր արտաքին սպառնալիքներից, ունեցավ ստեղծագործելու և զարգանալու ապահով պայմաններ: Այդ ժամանակաշրջանում ստեղծվեցին արտադրողական վիթխարի հզորություններ, աննախադեպ զարգացում ապրեց Հայաստանի տնտեսությունը, արդյունաբերությունը, գիտությունը, կրթությունը և մշակույթը, բազմապատկվեց երկրի բնակչությունը:

Խորհրդային Հայաստանն անցել է պատմության գիրկը, սակայն այսօր էլ արդիական և հրատապ է նրա պատմության գիտական ուսումնասիրումն ու արժևորումը, «մութ անցքերի» և «սպիտակ էջերի» վերհանումը: Անկախության առաջին տարիներին, սակայն, Հայաստանի խորհրդային հանրապետության պատմության ուսումնասիրումը կարծես հետին պլան մղվեց: Որոշ պատմաբաններ և քաղաքական գործիչներ անհիմն կերպով փորձում էին Խորհրդային Հայաստանը պետականություն չհամարել, ժխտվում էր պատմական տվյալ ժամանակաշրջանում դրական արժեքների ձեռքբերումը: Կարծում ենք, անկախությունը և պետականությունը համարժեքներ չպետք է դիտել. Խորհրդային Հայաստանը, այո՛, լիարժեք անկախ պետություն չէր, բայց օժտված էր պետականության որոշակի ատրիբուտներով (Սահմանադրություն, զինանշան, դրոշ, օրհներգ, պետական կառավարման համակարգ, այդ թվում արտաքին կապերի գերատեսչություն և այլն) ու սահմանափակ իրավունքներով պետական կազմավորում էր ընդհանուր խորհրդային պետության մեջ:

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի երրորդ հանրապետության անկախ պետականության պայմաններում հայրենական պատմագիտության առջև լայն հնարավորություններ են բացվել կատարելու պատմագիտական օբյեկտիվ և անաչառ ուսումնասիրություններ այնպիսի թեմաներով, որոնց մասնակի անդրադարձն անգամ բացառված էր խորհրդային պետության գոյության ամբողջ ժամանակաշրջանում: Խորհրդային ամբողջատիրական համակարգը և պետական գրաքննության մամլիչ մեքենան իր բազմաթիվ օղակներով աչալուրջ հետևում և խստորեն կասեցնում էր խորհրդային քաղաքական, ռազմական և ռազմատնտեսական պատմության որոշ անցքերի լուսաբանումը թե՛ խորհրդային զանգվածային լրատվամիջոցներով, պարբերական մամուլի հրապարակումներում և թե՛ գիտական ուսումնասիրություններում: Նման «խիստ գաղտնի» խնդիրներից մեկի ուսումնասիրության առաջին փորձն է ներկայացված ատենախոսությունը:

Կարծում ենք, թեմայի ուսումնասիրության արդիականությունը նաև նրանում է, որ այսօր Հայաստանի երրորդ հանրապետության պաշտպանունակության ամրապնդման և ռազմական անվտանգության գործում ռազմական արդյունաբերության համալիրը (ՌԱՀ) կարևոր դեր ու նշանակություն ունի: ՀՀ զինված ուժերը (ԶՈՒ) մշտապես բարձր մարտական պատրաստության վիճակում պահելու համար անհրաժեշտ են ժամանակակից մարտունակ սպառազինություն և ռազմական տեխնիկա: Այդ առումով դրական է, որ ներկայիս «ՀՀ ռազմաքա-



© National Library of Armenia

ղաքական ղեկավարությունը ռազմական արդյունաբերության համակարգի զարգացումը դիտում է որպես ոչ միայն ԶՈՒ–ի կարիքների բավարարման գերակա միջոց, այլև պետության ընդհանուր տնտեսական զարգացման արդյունավետ խթանիչ» և, որ «համակարգի զարգացումը պետք է դառնա ազգային անվտանգության ապահովման գերակայություն»[1]: Հանրապետությունում ՌԱՀ–ի կատարելագործմանն ու նրա դերի բարձրացմանն է միտված 2015 թ. մարտի 25–ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «ՌԱՀ–ի մասին» ՀՀ օրենքը: Նրանում հստակ նշվում է, որ ՀՀ ռազմաարդյունաբերական քաղաքականության նպատակն է՝ «ռազմաարդյունաբերության վերածումը տնտեսության կարևորագույն և առաջատար ոլորտի, որը կապահովի սեփական պաշտպանական կարիքները ոչ միայն կարճաժամկետ, այլև երկարաժամկետ հեռանկարում՝ ստեղծելով ռազմական անվտանգության ապահովման և տարածաշրջանային հավասարակշռության պահպանման իրական երաշխիքներ»[2]:

Ռազմաքաղաքական առումով աշխատության արդիականությունն ու հրատապությունը նրանում է, որ ռազմաարդունաբերության ոլորտում Հայաստանի Հանրապետությունը ներկայումս սերտ համագործակցություն է ծավալել մի քանի երկրների (ԱՄՆ, Իտալիա, Լեհաստան, Սերբիա, Բելառուս և այլն), առաջին հերթին՝ Ռուսաստանի Դաշնության հետ, նաև՝ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) շրջանակներում: Ռուսաստանի Դաշնության հետ իրականացվում են Հայաստանի պաշտպանունակության ամրապնդման և ռազմական անվտանգության համալիր միջոցառումներ, մասնավորապես, ստեղծվում է հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) միասնական համակարգ:

**ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:** Ատենախոսության նպատակն է պատմական փաստերի հիման վրա հետազոտել և ցույց տալ Խորհրդային Հայաստանի տեղն ու դերը ԽՍՀՄ ՌԱՀ–ում, ներկայացնել հանրապետության գիտության և պաշտպանական արդյունաբերության ոլորտի ձեռնարկությունների մասնակցությունը ռազմապաշտպանական արտադրությանը խորհրդային ամբողջ ժամանակաշրջանում: Այդ նպատակով աշխատությունում առաջադրված են հետևյալ հիմնախնդիրները.

– բացահայտել «ՌԱՀ» հասկացությունը,

– ցույց տալ խորհրդային ռազմարդյունաբերության, դրա կառավարման համակարգի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները 1920–1930–ական թթ.,

– ներկայացնել 1920–1930–ական թթ. Խորհրդային Հայաստանի արդյունաբերության զարգացումը որպես ռազմապաշտպանական միջոցառումների անցկացման նախադրյալ,

– վերհանել Խորհրդային Հայաստանում ռազմապաշտպանական միջոցառումների անցկացման խնդիրները, դրանց նշանակությունը հանրապետության պաշտպանունակության ամրապնդման, տնտեսության զարգացման տեսանկյունից,

– ներկայացնել Խորհրդային Հայաստանը ԽՍՀՄ ռազմապաշտպանական միջոցառումների և խորհրդաթուրքական դիմակայության ոլորտում Երկրորդ աշխարհամարտի տարիներին (1939–1945 թթ.),

---

[1] Օհանյան Ս., ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացումը որպես պաշտպանական բարեփոխումների առաջնային խնդիր, «Հայկական բանակ», Ե., 2011, № 3, էջ 11, 15:

[2] Տե՛ս ՀՀ օրենքը «Ռազմաարդյունաբերական համալիրի մասին» (http://www.parliament.am):



© National Library of Armenia

– լուսաբանել հանրապետության պաշտպանական արդյունաբերության առաջնեկի՝ Երևանի թիվ 447 ինքնաթիռաշինական գործարանի, հիմնադրման և արտադրության կազմակերպման հարցերը,

– վերհանել Խորհրդային Հայաստանի արդյունաբերության ռազմականացման և ռազմական արտադրության կազմակերպման խնդիրները Հայրենական պատերազմի տարիներին,

– ներկայացնել հանրապետության գիտության և գիտնականների մասնակցությունը ռազմապաշտպանական ոլորտի աշխատանքներում Հայրենական պատերազմի տարիներին,

– ցույց տալ գերմանական ռազմավարի դերը Խորհրդային Հայաստանի արդյունաբերության առաջատար ճյուղերի զարգացման գործում հետպատերազմյան տարիներին,

– լուսաբանել խորհրդային ՌԱՀ–ի կազմակերպման և զարգացման առաջնահերթությունները, կառավարման համակարգը հետպատերազմյան տարիներին,

– բացահայտել հետպատերազմյան տարիներին հանրապետությունում իրականացված ռազմապաշտպանական միջոցառումների բնույթը,

– ներկայացնել ՀԽՍՀ արդյունաբերության ռազմապաշտպանական ճյուղի ձեռնարկությունների ներգրավվածությունը խորհրդային ՌԱՀ–ում և նրանց արտադրանքը հետպատերազմյան տասնամյակներին,

– ներկայացնել հանրապետության գիտության ներդրումը խորհրդային ՌԱՀ–ում, ռազմապաշտպանական և տիեզերական արդյունաբերության ոլորտում գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում,

– ցույց տալ Հայաստանի ռազմապաշտպանական ճյուղի ձեռնարկությունների և կազմակերպությունների դերը հանրապետության սոցիալ–տնտեսական զարգացման և բնակչության զբաղվածության ապահովման գործում,

– ներկայացնել ռազմապաշտպանական արդյունաբերության ոլորտում խորհրդային վերջին տարիներին առաջացած խնդիրները և Հայաստանում կոնվերսիայի (փոխարկում) գործընթացի սկիզբը:

Ատենախոսությունում ուսումնասիրվում են թեմայից բխող նաև այլ խնդիրներ, որոնք ունեն պատմագիտական և տեսական կարևոր նշանակություն:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ:** Ատենախոսությունում առաջադրված հիմնախնդիրների ուսումնասիրությունը կատարվել է թեմային առնչվող արխիվային փաստաթղթերի, տպագիր սկզբնաղբյուրների, պատմագիտական և այլ գրականության պատմաքննական, պատմահամեմատական վերլուծությունների, փաստերի համադրման և ընդհանրացումների միջոցով: Ուսումնասիրությունը զերծ է գաղափարական ազդեցությունից, հեղինակը ղեկավարվում է պատմական ճշմարտության, պատմականության ու անաչառության մեթոդաբանական սկզբունքներով:

**ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ:** Ժամանակագրական առումով թեման ընդգրկում է ԽՍՀՄ–ի կազմում Խորհրդային Հայաստանի պատմության ամբողջ ժամանակաշրջանը՝ 1922–1991 թթ.: Ուսումնասիրության տարածքային շրջանակներն ընդգրկում է ԽՍՀՄ–ը, առաջին հերթին՝ Խորհրդային Հայաստանը:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ, ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:** Հետազոտության գիտական նորույթը նրանում է, որ հետխորհրդային տարիներին գաղտնազերծված փաստաթղթերի ու նյութերի հիման վրա առաջին անգամ հայ պատմագիտության մեջ ամբողջական և համակողմանի



© National Library of Armenia

ուսումնասիրվում ու բացահայտվում են Խորհրդային Հայաստանում իրականացված ռազմապաշտպանական միջոցառումները, ՀԽՍՀ արդյունաբերության և գիտության ներդրումը ԽՍՀՄ ՌԱՀ–ում խորհրդային ամբողջ ժամանակաշրջանում:

Բացի գիտական նորույթից, ուսումնասիրությունը կարևորվում է տեսական և կիրառական նշանակությամբ: Նկատի ունենք, որ հատկապես վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում կարևոր դեր է հատկացվում երկրում գիտահենք տնտեսության, արդյունաբերության գլխավոր հատվածի՝ ծանր, այդ թվում ռազմական, զարգացման հեռանկարներին: Այստեղ է, որ խորհրդային ՌԱՀ–ի գործունեության և կառավարման մեծ փորձը կարող է օգտակար, ուսանելի և կիրառելի լինել:

Աշխատանքը կարող է օգտագործվել նաև գիտաուսումնական նպատակներով, նրանում կատարված ընդհանրացումներն օգտակար կլինեն «Հայոց պատմության» ակադեմիական հրատարակություններում, բուհական դասագրքերում և ձեռնարկներում Խորհրդային Հայաստանի պատմությունը ներկայացնելու, ինչպես նաև հատուկ դասընթաց կազմելու համար:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ:** Ուսումնասիրության համար աղբյուրագիտական հիմք են ծառայել արխիվային փաստաթղթերը, կուսակցական և պետական մարմինների, խորհրդային կառավարության, նրա առանձին գերատեսչությունների որոշումներն ու հրամանները, հրահանգներն ու հանձնարարականները, նամակներն ու զեկուցագրերը, հաշվետվությունները և այլն, որոնց զգալի մասը տարիներ շարունակ հավաքվել է «Հատուկ թղթապանակում»՝ «խիստ գաղտնի» ու «հատուկ կարևորության» մակագրությամբ, և ուսումնասիրողների համար հասանելի չի եղել: Հարկ է նշել, որ ԽՍՀՄ–ի, այդ թվում Խորհրդային Հայաստանի, ռազմապաշտպանական խնդիրներին և ռազմական (պաշտպանական) արդյունաբերությանը վերաբերող միութենական–կենտրոնական, նաև հանրապետական, բոլոր փաստաթղթերը պատրաստվել են մի քանի օրինակից, որոնցից հանվել են անհրաժեշտ քանակի պատճեններ: Փաստաթղթերի և այլ նյութերի մեկական օրինակներ պարտադիր ուղարկվել են միութենական հանրապետությունների կոմկուսի կենտկոմներ և կառավարություններ:

Աշխատանքում առաջադրված հիմնախնդիրների զգալի մասի (հատկապես հետպատերազմյան ժամանակաշրջանի) ուսումնասիրումը հնարավոր է դարձել շնորհիվ հետխորհրդային տարիներին գաղտնազերծված արխիվային ֆոնդերի փաստաթղթերի ու նյութերի, որոնք առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ: Դրանց գերակշիռ մասը գաղտնազերծվել և պահպանման է հանձնվել Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)[3] ՀՀ կառավարության 1990–ական թթ. երկրորդ կեսի և հետագա տարիների հատուկ որոշումներով:

Աղբյուրների հաջորդ խումբը կազմում են փաստաթղթերի և վիճակագրական նյութերի տպագիր ժողովածուները[4]: Աղբյուրագիտական արժեք ունեն նաև ժա-

---

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1 (ՀԿԿ Կենտկոմ («Հատուկ թղթապանակ»)), ֆ. 113 (ՀԽՍՀ կառավարություն) և այլն:

[4] Социалистическое строительство Арм. ССР (1920–1940), Е., 1940, Советская Армения в годы Великой Отечественной войны (1941–1945). Сб. документов и материалов, Е., 1975, Армения и советско–турецкие отношения в дипломатических документах 1945–1946 гг., Е., 2010, Документы МИД Германии. Вып. 2. Германская политика в Турции (1941–1943), М., 1946, Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны 1941–1945 гг., том 4. Крымская конференция руководителей трех союзных держав – СССР, США и Великобритании (4–11 февраля 1945 г.), Сб. документов, М., 1979, том 6. Берлинская



© National Library of Armenia

մանակի խորհրդահայ կուսակցական և պետական ղեկավար գործիչների հուշագրություններն ու աշխատությունները[5], նրանց, նաև հայազգի նշանավոր գիտնականներին և կոնստրուկտորներին, ռազմական տեխնիկայի փորձարկողներին և ռազմական արտադրության մասնագետներին նվիրված ուսումնասիրությունները[6]: Դրանցում Խորհրդային Հայաստանի սոցիալ–տնտեսական կյանքի, արդյունաբերության, գիտության բնագավառներում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները ներկայացված են ականատեսի աչքերով, բացահայտված են առանձին խոշոր անհատների գործունեության ուշագրավ դրվագները, տրվել են ուշադրության արժանի գնահատականներ և այլն:

Թեմայի ուսումնասիրման համար կարևոր նշանակություն ունեն առանձին կոլեկտիվ ուսումնասիրությունները և աշխատությունները[7], որոնցում առկա են որոշակի փաստագրական նյութեր և վերլուծություններ:

Թեմային առնչվող պատմագիտական աշխատությունները, որոնց գերակշիռ մասն օտարալեզու է, սակավաթիվ են: Հրապարակի վրա թեև չկա սույն ատենախոսության թեմայով որևէ առանձին և ամփոփ ուսումնասիրություն, սակայն առկա են մենագրություններ և աշխատություններ, որոնցում ներկայացված են աշխատությունում լուսաբանված որոշ հիմնախնդիրները: Խորհրդային տարիներին առավել հանգամանալի ուսումնասիրվել են Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմների և դրանց նախորդող տարիներին ԽՍՀՄ ռազմատնտեսական քաղաքականության, Խորհրդային Հայաստանի արդյունաբերության ռազմականացման, ռազմական նշանակության արտադրանքի թողարկման, դրանում գիտության և գիտատեխնիկական աշխատողների մասնակցության վերաբերյալ խնդիրները: Խորհրդային ժամանակաշրջանի հետազոտողներից կարելի է առանձնացնել Յ. Չադաևի, Գ. Կրավչենկոյի, Ս. Ռոզենֆելդի և Կ. Կլիմենկոյի, Գ. Ալահվերդյանի, Ա. Գրիգորյանցի, Կ. Կոզմոյանի, Լ. Անանյանի, Հ. Հարությունյանի աշխատությունները[8]:

---

(Потсдамская) конференция руководителей трех союзных держав – СССР, США и Великобритании (17 июля – 2 августа 1945 г.), Сб. документов, М., 1984, Документы внешней политики СССР, т. 23, книга 1, М., 1995, Политбюро ЦК РКП(б) – ВКП(б). Повестки дня заседаний, 1919–1952. Каталог в трех томах, т. 1 (1919–1929), М., 2000.

[5] Սարգսյան Ֆ., Կյանքի դասերը (Հուշեր), Ե., 2001, Ասծատրյան Ե., 20–րդ դար. Հայաստանի կառուցման ճանապարհին (Հուշեր): Գիրք առաջին, Ե., 2004, Քոչինյան Ա., Անավարտ հուշեր, Ե., 2008, Дни сквозь строчки. Из рабочих дневников Карена Демирчяна, Е., 2010, Հայաստանի ժողտնտխորհի վերջին նախագահը: Գուրգեն Չոլախյան (Կազմող՝ Է. Չոլախյան–Գասպարյան), Ե., 2012:

[6] Ավետիսյան Հ., Վիրաբյան Ա., Հարությունյան Կ., Գրիգոր Հարությունյան. կյանքը և գործունեությունը, Ե., 2000, Պետրոսյան Վ., Գրիգոր Հարությունյանի ժամանակը: Գիրք առաջին–երրորդ, Ե., 2008, նույնի՝ Անտոն Քոչինյանի ժամանակը, Ե., 2013, Заробян Н., Яков Заробян и его эпоха, Е., 2008, Саркисян А., Армяне – военные ученые, конструкторы, испытатели и производственники 20–го века, т. 1, Е., 1998, т. 2–3, Е., 2005 և այլն:

[7] История ереванского станкостроительного завода имени Ф. Э. Дзержинского, Е., 1967, История социалистической экономики СССР, в семи томах, т. 5. Советская экономика накануне и в период Великой Отечественной войны. 1938–1945 гг., М., 1978, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան 50 տարում, Ե., 1994, Отечественный военно–промышленный комплекс и его историческое развитие. Под ред. О. Бакланова и О. Рогозина. Под обшей ред. О. Рогозина, М., 2013 և այլն:

[8] Чадаев Я., Экономика СССР в период Великой Отечественной войны (1941–1945), М., 1965, Кравченко Г., Экономика СССР в годы Великой Отечественной войны (1941–1945), М., 1970, Розенфельд С., Клименко К., История машиностроения СССР (с первой половины 19–го в. до наших дней), М., 1961, Аллахвердян Г., К характеристике промышленности Армянской ССР в



© National Library of Armenia

Խորհրդային Հայաստանի արդյունաբերության պատմության որոշ հարցերին խորհրդային տարիներին անդրադարձել են նաև մի շարք այլ հեղինակներ[9]: Նրանց աշխատությունները թեև որոշակի հետաքրքրություն են ներկայացնում, սակայն, կրում են խորհրդային ժամանակաշրջանին հատուկ առանձակի կնիքը և ռազմական ոլորտի խնդիրներին գրեթե չեն առնչվում:

Ինչ վերաբերում է հետպատերազմյան տարիների ՌԱՀ–ի և ռազմապաշտպանական ոլորտի խնդիրների պատմությանը, ապա խորհրդային պատմագրությունը դրանց ընդհանրապես չի անդրադարձել:

Ի տարբերություն խորհրդային պատմագրության՝ Արևմուտքի որոշ հեղինակներ (Վ. Ասպատուրյան, Մ. Ագուրսկի) իրենց աշխատություններում[10] առաջին փորձերը կատարեցին ԽՍՀՄ ՌԱՀ–ի բացառապես տեսական հարցերի ուսումնասիրության բնագավառում: Պարզ է, որ խորհրդային ՌԱՀ–ի գործունեության մասին գերգաղտնի տվյալները չէին կարող հասանելի լինել որևէ ուսումնասիրողի (առավել ևս արտասահմանցի) համար:

ԽՍՀՄ փլուզումից հետո միայն սկսեցին ի հայտ գալ խորհրդային ՌԱՀ–ի և ռազմապաշտպանական արդյունաբերության պատմության խնդիրներին նվիրված հատուկ ուսումնասիրություններ, որոնց գերակշիռ մասի հեղինակները ռուսաստանցի հետազոտողներ են: Հետխորհրդային շրջանի հեղինակներից առաջինը Ն. Սիմոնովն է, ով ուշագրավ մենագրություն հրատարակեց խորհրդային ՌԱՀ–ի ստեղծման և զարգացման մասին: Նա գիտականորեն ուսումնասիրում է նախապատերազմյան շրջանում ԽՍՀՄ–ում ռազմաարդյունաբերական արտադրության կազմակերպման, խորհրդային ռազմատեխնիկական քաղաքականության հարցերը, վերլուծության է ենթարկում ռազմական արտադրանքի քանակական աճի տվյալները Հայրենական պատերազմի ու հետպատերազմյան առաջին տարիներին և այլն[11]:

Աշխատանքում առաջադրված հիմնախնդիրների որոշակի մասի լուսաբանման համար օգտակար է եղել Ի. Բիստրովայի արժեքավոր ուսումնասիրությունը[12]: Հեղինակը հետազոտում է խորհրդային ՌԱՀ–ի ինչպես տեսական խնդիրները, այնպես էլ գործունեությունը խորհրդային գրեթե ամբողջ ժամանակաշրջա-

---

период Отечественной войны, “Известия АН Арм. ССР (Общественные науки)”, Е., 1954, № 2, с. 3–11, Григорьянц А., Формирование и развитие технической интеллигенции Армении (1920–1965), Е., 1966, Կոզմոյան Կ., Երևանի Ֆ. Է. Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի 50 տարին, Ե., 1956, նույնի՝ Լենինական, Ե., 1957, նույնի՝ Կիրովական, Ե., 1960, նույնի՝ Հոկտեմբերյան, Ե., 1975, Անանյան Լ., Սովետական Հայաստանի ինդուստրիալ զարգացումը (նախապատերազմյան շրջան), Ե., 1979, նույնի՝ Հայկական ՍՍՀ արդյունաբերությունը զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում, Ե., 1982, Հարությունյան Հ., Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը (1938–1960 թթ.), Ե., 1987:

[9] Ենգոյան Փ., Հայաստանը ինդուստրացման ուղիով (1926–1958), Ե., 1967, Ջուրաբյան Ս., Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացումը 50 տարում (1920–1970), Ե., 1971, Պողոսյան Վ., Հայաստանի կոմունիստական կուսակցության գործունեությունը Մեծ Հայրենականում հանրապետության նյութական և հոգևոր ուժերի մոբիլիզացման ուղղությամբ, Ե., 1982, Ավագյան Վ., Սովետական Հայաստանի քիմիական արդյունաբերության զարգացման պատմությունից (1927–1980 թթ.), Ե., 1983 և այլն:

[10] Aspaturian V., The Soviet Military–Industrial Complex: Does It Exist? //Testing the Teory of the Military–Industrial Complex, Journal of international Affairs, 26, № 1, 1972, pp. 1–28, Agursky M., The Soviet Military–Industrial Complex. Jerusalem Papers on Peace Problems, 31, 1980, pp. 1–32.

[11] Симонов Н., Военно–промышленный комплекс СССР в 1920–1950–е годы: темпы экономического роста, структура, организация производства и управление, М., 1996.

[12] Быстрова И., Советский военно–промышленный комплекс: проблемы становления и развития (1930–1980–е годы), М., 1999.



© National Library of Armenia

նում, կատարում ուշագրավ և համոզիչ եզրահանգումներ: Ն. Սիմոնովի և Ի. Բիստրովայի մենագրությունները կարելի է համարել խորհրդային ՌԱՅ–ի և ռազմապաշտպանական արդյունաբերության պատմության ուսումնասիրության ոլորտում լուրջ առաջընթաց: Դրանցում գիտական շրջանառության մեջ է դրված զգալի քանակի փաստական նյութ, որը մինչ այդ հասանելի չէր հետազոտողների համար:

Նախապատերազմյան ու պատերազմի շրջանում խորհրդային պաշտպանական արդյունաբերության, ռազմապաշտպանական միջոցառումների որոշ հիմնահարցերի ուսումնասիրության համար օգտակար են եղել Մ. Մուխինի, Ա. Ստեպանովի, Ա. Բեզուգոլնիի արժեքավոր հոդվածները[13]: Նախապատերազմյան շրջանի խորհրդային տնտեսության, այդ թվում ռազմապաշտպանական ոլորտի, խնդիրների լուսաբանմանն են նվիրված անգլիացի պատմաբան Ռ. Դևիսի և շվեդ հետազոտող Լ. Սամուելսոնի աշխատությունները, որտեղ հեղինակները կատարում են մի շարք ուշագրավ եզրահանգումներ[14]:

Ինչ վերաբերում է մերօրյա հայ պատմագիտությանը, ապա հետազոտողներից և ոչ մեկն իր առջև խնդիր չի դրել ուսումնասիրելու խորհրդային ՌԱՅ–ի, դրանում Հայաստանի մասնակցության հիմնախնդիրը ԽՍՀՄ ամբողջ ժամանակաշրջանում: Նախապատերազմյան շրջանում Խորհրդային Հայաստանի տնտեսության վերականգնման և զարգացման, հանրապետության արդյունաբերականացման խնդիրներն ուսումնասիրված են վաստակաշատ պատմաբան Վ. Ղազախեցյանի արժեքավոր մենագրության մեջ[15]: Դրանում, սակայն, ռազմապաշտպանական հարցերին գրեթե անդրադարձ չի կատարվում, դրանք շոշափվում են մեկ կամ երկու պարբերությամբ: Խորհրդային Հայաստանի նախապատերազմյան և պատերազմի շրջանի պատմության մեզ հետաքրքրող խնդիրներ է ուսումնասիրել ռազմական պատմության հետազոտող Կ. Հարությունյանը[16]: Նրա արժեքավոր աշխատություններում առկա է մեծ քանակի փաստական նյութ և ուշագրավ եզրակացություններ: Նշելի են նաև պատմաբաններ Հ. Մանուկյանի, Գ. Խաչատրյանի ու Ս. Ղարիբջանյանի ուսումնասիրությունները[17], որոնցում քննության են առնված Հայրենական պատերազմի տարիներին Հայաստանի արդյու-

---

[13] Мухин М., Эволюция системы управления советской оборонной промышленностью в 1921–1941 годах и смена приоритетов “оборонки”, “Отечественная история”, М., 2000, № 3, с. 3–15, Степанов А., Военные планы и оборонная промышленность СССР накануне и в начале Второй мировой войны: британский фактор, М., 2006, № 3, с. 33–40, Безугольный А., Ни войны, ни мира. Положение на советско–турецкой границе, меры советского руководства по предотвращению турецкой угрозы в первый период Великой Отечественной войны, М., 2003, № 5, с. 53–76.

[14] Davies R., Crizis and Progress in the Soviet Economy, 1931–1933 (The industrialisation of Soviet Russia), London, 1996, Самуэльсон Л., Красный колосс. Становление военно–промышленного комплекса СССР. 1921–1941, М., 2001.

[15] Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920–1940 թթ., Ե., 2006:

[16] Հարությունյան Կ., Մանուկյան Հ., Հայ ժողովրդի ավանդը Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակում, 1941–1945 թթ., Ե., 2001, Հարությունյան Կ., Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ., Ե., 2002, Арутюнян К., Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941–1945), Е., 2004 և այլն:

[17] Մանուկյան Հ., Խորհրդային Հայաստանի աշխատավորության ավանդը Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակում (1941–1945 թթ.), Ե., 2000, Հարությունյան Կ., Մանուկյան Հ., նշվ. աշխ., Խաչատրյան Գ., Հայաստանի արդյունաբերությունը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, Ե., 2005, Гарибджанян С., Наука в Армении в годы Великой Отечественной войны (1941–1945), Е., 2007, նույնի՝ Документы об организации академической науки в Армении в годы Великой Отечественной войны (1942–1944), “Вестник общественных наук”, Е., 1995, № 1, էջ 239–249:



© National Library of Armenia

նաբերության՝ պատերազմի պահանջներին վերակառուցման, ռազմական արտադրանքի թողարկման, դրանում հանրապետության գիտության մասնակցության և այլ խնդիրներ:

Խորհրդային Հայաստանի հետպատերազմյան և 1990–ական թթ. սկզբի պատմության սոցիալ–տնտեսական և հասարակական–քաղաքական խնդիրների լուսաբանմանն են նվիրված Ռ. Ազիզբեկյանի ու Գ. Գեղամյանի համահեղինակած ուշագրավ աշխատությունը և Ա. Վիրաբյանի արժեքավոր մենագրությունը[18]: Տնտեսության պատմության հետազոտող Լ. Անանյանի աշխատությունում[19] որոշ ընդհանրացված տեղեկություններ են բերված հետպատերազմյան տարիներին Հայաստանի ձեռնարկություններում արտադրված ռազմապաշտպանական բնույթի արտադրանքի մասին և այլն: ԽՍՀՄ փլուզման շրջանում Հայաստանում ստեղծված սոցիալ–տնտեսական ծանր դրության, արդյունաբերության անկման, արտաքին մատակարարումների և բեռնափոխադրումների ծավալների բազմակի կրճատման, տնտեսական կապերի խզման, դրանց խորքային պատճառների ու հետևանքների մասին է նշվում Ռ. Ազիզբեկյանի հետաքրքիր ուսումնասիրությունում[20] և Է. Մինասյանի արժեքավոր մենագրության մեջ[21]:

Վերջին տարիներին հայ մասնագետների (հիմնականում ռազմական ոլորտի) կողմից հրապարակվել են մերօրյա ՌԱՀ–ի տեսական և գործնական խնդիրներին վերաբերող, նրանում գիտության դերի մասին մի շարք հետաքրքիր հոդվածներ[22]:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ:** Ատենախոսության թեմայով հեղինակը հրատարակել է մենագրություն և հոդվածներ: Աշխատանքի հիմնադրույթների ու եզրահանգումների մասին զեկուցվել է հանրապետական և միջազգային գիտաժողովներում, գիտագործնական սեմինարներում: Ատենախոսությունը քննարկվել և դրական եզրակացությամբ հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նորագույն պատմության բաժնի կողմից:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:** Ուսումնասիրությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային 263 էջ:

**<u>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ</u>** հիմնավորված է թեմայի արդիականությունն ու հրատապությունը, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, տեսական և կիրառա-

---

[18] Ազիզբեկյան Ռ., Գեղամյան Գ., Հայաստանը 1945–1990–ական թվականներին, Ե., 1994, Վիրաբյան Ա., Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով: Հասարակական–քաղաքական կյանքը (1945–1957 թթ.), Ե., 2001:

[19] Անանյան Լ., Հայաստանի տնտեսական պատմության ուրվագծեր, Ե., 2003:

[20] Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, համառոտ ակնարկ, Ե., 1992:

[21] Մինասյան Է., Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Ե., 2013:

[22] Խաչատուրով Յու., Շադյան Պ., Դադայան Կ., Ռազմական արդյունաբերությունը և նրա վերակազմավորման խնդիրները, «Հայկական բանակ», Ե., 2008, № 1, էջ 11–35, Իսախանյան Մ., Պետրոսյան Ա., ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացմանն ուղղված հիմնական միջոցառումները պաշտպանական բարեփոխումների շրջանակներում, «Հայկական բանակ», Ե., 2011, № 3, էջ 18–24, Պետրոսյան Ա., Թովմասյան Ա., Ռազմական արդյունաբերության համակարգի զարգացման տնտեսական նախադրյալները, «Հայկական բանակ», Ե., 2011, № 3, էջ 25–34, Բաղալյան Գ., ՀՀ արդյունաբերության զարգացման համատեքստում ռազմաարդյունաբերական համակարգի զարգացման հեռանկարի մասին, «Հայկական բանակ», Ե., 2011, № 3, էջ 35–42, Մաքևոսյան Հ., Ռազմաարդյունաբերական համալիրը և հիմնարար գիտությունը, «Հայկական բանակ», Ե., 2011, № 3, էջ 43–53:



© National Library of Armenia

կան նշանակությունը, ներկայացված է թեմայի աղբյուրագիտական հիմքը և ուսումնասիրվածության աստիճանը:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԸ՝ **«Խորհրդային ռազմաարդյունաբերության ստեղծումը և զարգացումը: Ռազմապաշտպանական արդյունաբերության ձևավորման նախադրյալները Խորհրդային Հայաստանում (1920–1930–ական թթ.)»**, բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Ռազմապաշտպանական արդյունաբերության և դրա կառավարման համակարգի ձևավորման և զարգացման հիմնափուլերը»**, նշվում է, որ Ռուսաստանում խորհրդային իշխանության հաստատումով երկրի ռազմապաշտպանական արդյունաբերության ոլորտում որակապես նոր իրավիճակ ստեղծվեց: Միջազգային քաղաքական և տնտեսական մեկուսացման մեջ հայտնված Խորհրդային Ռուսաստանի իշխանությունները պարտադրված էին ներքին միջոցներով հոգալ երկրի ռազմական արդյունաբերության ստեղծման և զարգացման մասին: Գործնականում դա հնարավոր էր միայն արդյունաբերության վերազինման և ռազմականացման, պաշտպանական արդյունաբերության նոր ճյուղեր ստեղծելու միջոցով:

ԽՍՀՄ–ում նոր տնտեսական քաղաքականությունից (ՆԷՊ) արդյունաբերականացման (ինդուստրացման) քաղաքականությանն անցումը սկզբնական շրջանում արտահայտվեց առաջին հերթին ռազմապաշտպանական արդյունաբերության կտրուկ զարգացմամբ՝ էներգետիկայի աննախադեպ զարգացմանը զուգընթաց: Պատճառը ոչ միայն այն էր, որ արագացված տեմպերով կառուցվում էին նոր ձեռնարկություններ, այլև նրանում, որ ռազմապաշտպանական արդյունաբերությունը համալրվում էր գործարաններով, որոնք վերամասնագիտացվում և քաղաքացիականից անցնում էին ռազմական արտադրության:

1920–ական թթ. վերջին և 1930–ական թթ. սկզբին աշխարհում միջազգային իրադրության կտրուկ սրումը խորհրդային իշխանություններին ստիպեց առավել մտահոգվել երկրի պաշտպանունակության ամրապնդման և ռազմապաշտպանական արդյունաբերության զարգացման խնդիրներով: Դրանք հատուկ քննարկման առարկա դարձան ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի 1929 թ. հուլիսի 1–ի և 8–ի փակ նիստերում, որոնց արդյունքում հուլիսի 15–ին քաղբյուրոն ընդունում է «Ռազմական արդյունաբերության մասին» որոշումը[23]:

Երկրի ռազմապաշտպանական արդյունաբերության առջև դրված բարդ և պատասխանատու խնդիրների լուծումը պահանջում էր ոլորտի կառավարման արդյունավետ համակարգի ստեղծում: Այդ համակարգն ամփոփված էր ԽՍՀՄ ԺՏԲԽ–ի շրջանակներում մինչև 1932 թ. սկիզբը, երբ արմատական վերակառուցման ենթարկվեց: 1932 թ. հունվարի 5–ին ԺՏԲԽ–ն բաժանվեց ծանր, թեթև և անտառային արդյունաբերության ժողկոմատների: Պաշտպանական արդյունաբերության կառավարումն այսուհետ կենտրոնանալու էր ԽՍՀՄ ծանր արդյունաբերության ժողկոմատի համակարգում: ԽՍՀՄ Կենտգործկոմի 1936 թ. դեկտեմբերի 8–ի որոշմամբ՝ երկրի ռազմապաշտպանական արդյունաբերությունը կենտրոնացվում է ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության առանձին ժողկոմատի համակարգում: Սա, մեր կարծիքով, շրջադարձային քայլ էր ԽՍՀՄ տնտեսության «պաշտպանական» համակարգի հետագա զարգացման համար՝ ռազմապաշտպանական արդյունաբերությունն աստիճանաբար և հաստատուն կերպով ստանձնում էր ԽՍՀՄ ժողտնտեսության անվիճելի «լոկոմոտիվի» դերը: Պաշտ-

[23] Տե՛ս Политбюро ЦК РКП(б) – ВКП(б). Повестки дня заседаний, 1919–1952. Каталог, в трех томах, т. 1, 1919–1929, М., 2000, էջ 708:



© National Library of Armenia

պանական արդյունաբերության միասնական ժողկոմատը գոյատևեց մինչև 1939 թ. սկիզբը, երբ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հունվարի 11–ի որոշումով բաժանվեց ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության, Նավաշինության արդյունաբերության, Ռազմամթերքների և Սպառազինության առանձին ժողկոմատների[24]:

Խորհրդային իշխանության ընդամենը երկու տասնամյակների ընթացքում ռազմաարդյունաբերությունը վերածվեց ԽՍՀՄ տնտեսության արդյունաբերական խոշորագույն ճյուղի: Կարելի է փաստել, որ երկրորդ աշխարհամարտի սկզբին և Հայրենական պատերազմի նախաշեմին ԽՍՀՄ–ը հիմնականում լուծել էր երկրի ռազմապաշտպանական մասնագիտացված արդյունաբերության ստեղծման կարևոր հիմնախնդիրը:

<u>Երկրորդ ենթագլխում՝</u> **«Խորհրդային Հայաստանի արդյունաբերության զարգացումը որպես ռազմապաշտպանական միջոցառումների անցկացման նախադրյալ»**, ցույց է տրվում, որ Հայաստանի առաջին հանրապետությունից Խորհրդային Հայաստանը ժառանգեց ամբողջությամբ քայքայված և հետամնաց տնտեսություն: Խորհրդայնացման պահին երկիրը գրեթե չուներ արդյունաբերական հզորություններ: Ծայրահեղ հետամնաց վիճակում էր արդյունաբերության հիմքը կազմող մետաղամշակող ճյուղը: Ինչ վերաբերում է ռազմական արտադրանքի ոլորտին, ապա Առաջին հանրապետության տարիներին այն կրել է սիմվոլիկ բնույթ: Ալեքսանդրապոլում գործող մեխանիկական հրետանային արհեստանոցի բազայի վրա հիմնվել և մի կարճ ժամանակահատված գործել է «Փամփուշտի ազգային գործարանը»: Փամփուշտի մեխանիկական գործարան գործել է նաև Քանաքեռում: Հանրապետության ռազմական նախարարի 1920 թ. սեպտեմբերի 15–ի հրամանով Քանաքեռում գործող զինագնդացիրային արհեստանոցը վերակազմավորվել է Քանաքեռի հրետանային մեխանիկական արհեստանոցի[25]:

Խորհրդային Հայաստանի տնտեսության վերականգնման, արդյունաբերության տեխնիկական վերազինման գործում վճռական նշանակություն ունեցավ Խորհրդային Ռուսաստանի օգնությունը: Վերջինս նպաստեց հանրապետությունում էներգետիկայի զարգացմանը, ինչը նպաստավոր նախադրյալներ ստեղծեց տնտեսության համալիր զարգացման համար: Այն խթանեց լեռնահանքային, մասնավորապես պղնձարդյունաբերությունը և, հատկապես, քիմիական արդյունաբերությունը: Վերջինիս նորակառույցներից էին 1927 թ. գործարկված Երևանի կարբիդի 1–ին գործարանը, Ղարաքիլիսայի (Կիրովական, այժմ՝ Վանաձոր) քիմիական գործարանը՝ կարբիդ–կալցիումի ու ցիանամիդի արտադրամասերով: Մասնավորապես միութենական նշանակություն ունեցող կարբիդի արտադրության ընդլայնումը հնարավորություն էր տալիս կազմակերպելու բազմաթիվ նոր արտադրություններ, այդ թվում ռազմապաշտպանական նշանակության: ԽՍՀՄ քիմիական արդյունաբերության առաջատար ձեռնարկություններից էր դառնալու միութենական կառավարության 1933 թ. մայիսի 11–ի որոշմամբ Երևանի մերձակայքում կառուցվող սինթետիկ կաուչուկի (ՍԿ) գործարանը: Երկրում արհեստական կաուչուկի արտադրության կազմակերպումը սկզբունքային նշանակություն ուներ ԽՍՀՄ–ի համար: Ռազմական արտադրանքի համար անչափ կարևոր այդ հումքը վերջինս ստիպված էր թանկ գնով ներմուծել արտասահմանից: Ուստի Հայաստանում արհեստական կաուչուկի արտադրության կազմակերպումը միտված էր մոտ ապագայում վերացնելու արտասահմանից ԽՍՀՄ–ի կախվածութ-

---

[24] Տե՛ս История социалистической экономики СССР, в семи томах, т. 5, էջ 97:
[25] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 142, թ. 184 շրջ.:



© National Library of Armenia

յունը: Քլորոպրենային կաուչուկի առաջին արտադրանքը ՍԿ «Սովպրեն» գործարանը թողարկեց 1940 թ. մարտից:

Ինչպես նշվում է Հայոց պատմության ակադեմիական նոր հատորում. «Ծանր արդյունաբերության ճյուղերից Հայաստանում մեծ ուշադրություն էր նվիրվում նաև լեռնահանքային (պղնձի) արդյունաբերության զարգացմանը, մի բնագավառ, որով, ինչպես նշել է Ա. Խանջյանը ՀԿ(բ)Կ 9–րդ համագումարում (1934 թ.), Հայաստանը մասնակից էր դառնում ԽՍՀՄ էլեկտրաֆիկացիայի, ավտոմոբիլային, տրակտորային, ավիացիոն, կապի արդյունաբերության զարգացման, երկրի ռազմական պաշտպանության գործին (1933 թ. հայկական պղինձը կազմում էր ԽՍՀՄ պղնձի արտադրության 10 %–ը)»[26]:

1930–ական թթ. վերջին տարիներին Հայաստանում զարգացման բարձր տեմպերով, այդուհանդերձ, աչքի ընկան մեքենաշինությունն ու մետաղամշակումը: Արմատապես փոխվեց մետաղամշակման արդյունաբերության տեխնիկական բազան և կառուցվածքը: Եթե 1940 թ. արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալը 1913 թ. համեմատությամբ աճել էր 8,7, ապա մեքենաշինության և մետաղամշակման արտադրանքն ավելացավ 15 անգամ[27]:

Խորհրդային Հայաստանում զարգացած արդյունաբերության ստեղծմանն իր նպաստն էր բերում նաև հանրապետության գիտությունը, մասնավորապես 1935 թ. ստեղծված ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը (Արմֆան): Նրա կազմում գործող գիտահետազոտական մի քանի ինստիտուտները, հատկապես երկրաբանության և քիմիական, լուրջ հետազոտություններ ծավալեցին երկրի բնական պաշարների հայտնաբերման և արտադրության մեջ ներդնելու ուղղությամբ:

Արդեն 1930–ական թվականների վերջին հանրապետությունում առկա էր զարգացած բազմաճյուղ արդյունաբերություն, ինչը կենտրոնական իշխանություններին հնարավորություն տվեց Հայրենական պատերազմի սկզբին Հայաստանն աստիճանաբար ընդգրկել ինչպես Անդրկովկասյան ռազմական օկրուգի ռազմապաշտպանական միջոցառումներում, այնպես էլ ԽՍՀՄ–ում ձևավորվող ռազմաարդյունաբերական համալիրում:

Մինչև 1930–ական թթ. սկիզբը Հայաստանը ռազմապաշտպանական արտադրանքի պատվերներ չէր կատարում: Միայն 1933–1934 թթ. Անդրկովկասյան ռազմական օկրուգի կողմից ռազմապաշտպանական միջոցառումների շրջանակներում Հայաստանին ներկայացված հայտերի համաձայն՝ ՀՍԽՀ տնայնաարհեստագործական կոոպերացիայի միության արտելները ստացան ռազմական հանդերձանքի արտադրանքի պատվերներ: Երևանի, Լենինականի, Ստեփանավանի և Կիրովականի արտելներում կազմակերպվեց զինվորական համազգեստի, գոտկատեղի կաշեգոտիների, շինելի փաթեթագլանների, հրացանների համար ուսագոտիների և ատրճանակի պատյանների արտադրություն[28]:

Ինչպես ամբողջ ԽՍՀՄ–ում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում նախապատերազմյան տարիներին կարևորվում էր տնտեսությունում ռազմապաշտպանական միջոցառումների իրականացման ռազմավարությունը: ՀՍԽՀ ռազմապաշտպանական միջոցառումների ծրագիրը ոչ միայն չէր առանձնացվում հանրապետության տնտեսության զարգացման ամբողջական ծրագրից, այլև դրա իրականացումը լուրջ խթան էր Հայաստանի համալիր զարգացման համար:

---

[26] Տե՛ս Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին (Նորագույն ժամանակաշրջան. 1918–1945 թթ.), Ե., 2010, էջ 460:
[27] Տե՛ս Խաչատրյան Գ., նշվ. աշխ., էջ 40:
[28] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 1748, թ. 87:



© National Library of Armenia

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ **«Խորհրդային Հայաստանը Երկրորդ աշխարհամարտի ու Հայրենական մեծ պատերազմի տարիներին ԽՍՀՄ ռազմապաշտպանական միջոցառումներում և ռազմաարդյունաբերության համակարգում (1939–1945 թթ.)»**, բաղկացած է երկու ենթագլխից և չորս ենթահարցից:

Առաջին ենթագլխում՝ **«Խորհրդային Հայաստանը ԽՍՀՄ ռազմապաշտպանական միջոցառումների և խորհրդաթուրքական դիմակայության ոլորտում»**, ցույց է տրվում, որ Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմների տարիներին հանդիսանալով ԽՍՀՄ սահմանամերձ տարածք և ռազմական գործողությունների հավանական թատերաբեմ՝ Խորհրդային Հայաստանը կարևոր տեղ էր զբաղեցնում ԽՍՀՄ ռազմապաշտպանական միջոցառումներում: Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբից խորհրդային երկրի քաղաքական ղեկավարությունը և Կարմիր բանակի հրամանատարությունը սկսեցին հատուկ ուշադրություն հատկացնել ԽՍՀՄ հարավային սահմանների, այդ թվում անդրկովկասաթուրքական, ամրապնդման և ռազմականացման խնդիրներին: Անդրկովկասի խորհրդային հանրապետություններում կուտակվեցին ռազմական զգալի ուժեր և միջոցներ, հիմնականում ռազմական ավիացիա և հակաօդային պաշտպանության սպառազինություն: Վերջինս, իր հերթին, հրատապ դարձրեց վերակառուցելու Անդրկովկասի հանրապետությունների արդյունա-բերական որոշ գործարանները և ձեռնարկությունները՝ վնասված ռազմական տեխնիկան արագ վերանորոգելու, ինչպես նաև ռազմաարդյունաբերական պատվերներ կատարելու համար: Այդ նպատակով Անդրկովկասի խորհրդային հանրապետություններ, այդ թվում Հայաստան, ներմուծվեցին մեծ քանակությամբ սարքավորումներ և հումք: Խորհրդային Հայաստանում ռազմական տեխնիկա, մասնավորապես տանկեր, վերանորոգելու առաջադրանքներ ստացան Երևանի ավտոնորոգման և Լենինականի մեխանիկական գործարանները:

Հայրենական պատերազմի սկզբից մի քանի օր անց՝ 1941 թ. հուլիսի 4–ին, Կրեմլում Անդրկովկասի հանրապետությունների կոմկուսների առաջին քարտուղարների (Հայաստանի՝ Գ. Հարությունյանի, Վրաստանի՝ Կ. Չարկվիանիի և Ադրբեջանի՝ Մ. Բաղիրովի) հետ հանդիպման ժամանակ Ի. Ստալինը հայտարարեց. «Ռազմաճակատը ձեզանից հեռու է, բայց, համենայնդեպս, դուք գտնվում եք վտանգավոր գոտում: Մենք չենք կարող վստահ լինել, որ Թուրքիան չեզոքություն կպահպանի»[29]: Նշենք, որ թուրքական ինքնաթիռները պատերազմի առաջին շրջանում սկսել էին խախտել Խորհրդային Հայաստանի օդային սահմանները: Առկա էր նաև հանրապետության տարածքում հակառակորդի կողմից պարաշյուտային դեսանտի իջեցման վտանգը[30]:

Անդրկովկասում խորհրդային ռազմապաշտպանական միջոցառումների իրականացումը 1941 թ. աշնանից նոր թափով ծավալվեց: Անդրկովկասյան ռազմական օկրուգում տիրող իրադրությունը քննարկելու նպատակով 1942 թ. ապրիլի 25–ին Ի. Ստալինը Կրեմլում ընդունում է Անդրկովկասյան ռազմական օկրուգի հրամանատար գեներալ Ի. Տյուլենևին: Ստալինը հրամայում է ուժեղացնել օկրուգը՝ հագեցնել այն ռազմական տեխնիկայով և սպառազինությամբ: Նախատեսվում էր Անդրկովկասի խորհրդային հանրապետություններ, այդ թվում Հայաստան, ուղարկել լրացուցիչ սարքավորումներ և հումք՝ ռազմաարդյունաբերական պատվերներն ավելի լայն ծավալներով իրականացնելու համար: Եվ

---

[29] Горьков Ю., Государственный комитет обороны постановляет (1941–1945). Цифры, документы, М., 2002, с. 230.

[30] Ավետիսյան Հ. և ուրիշ., նշվ. աշխ., էջ 55: Տե՛ս նաև՝ Պետրոսյան Վ., Գրիգոր Հարությունյանի ժամանակը: Գիրք առաջին, էջ 464–465:



© National Library of Armenia

իրոք, Անդրկովկասյան ռազմական օկրուգի զորամասերի զենք ու զինամթերքի պահանջները բավարարելու համար անհրաժեշտ էր դրանց պատրաստումը կազմակերպել տեղական արդյունաբերության հիմքի վրա: Ինչպես նկատում է օկրուգի հրամանատար գեներալ Տյուլենևը, «Այդ գործին լծվեցին Անդրկովկասյան հանրապետությունների կուսակցական, խորհրդային և արհմիութենական կազմակերպությունները: Նրանց օգնությամբ օկրուգի զորքերի սպառազինման խնդիրը քիչ թե շատ արագ լուծում ստացավ»[31]:

1942 թ. ամռանն–աշնանը գերմանաթուրքական վտանգն Անդրկովկասում այնքան իրատեսական էր դարձել, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության սեպտեմբերի 9–ի հրամանագրով Հայկական և Ադրբեջանական ԽՍՀ–ների տարածքում մտցվեց ռազմական դրություն: Ի կատարումն որոշման, տարածաշրջանում տեղակայված 45–րդ բանակի ռազմխորհրդի սեպտեմբերի 16–ի որոշումով՝ սեպտեմբերի 18–ից ռազմական դրության մեջ հայտարարվեցին Հայկական ԽՍՀ և Նախիջևանի Ինքնավար ԽՍՀ ամբողջ տարածքը[32]:

Պատերազմի ավարտական փուլում Խորհրդային Միության կողմից Թուրքիային ներկայացված տարածքային պահանջները քննարկման առարկա դարձան մեծ տերությունների ղեկավարների 1945 թ. հուլիսին տեղի ունեցած Պոտսդամի կոնֆերանսում: Պատերազմում ԽՍՀՄ–ի երբեմնի դաշնակիցները՝ Մեծ Բրիտանիան և ԱՄՆ–ը, վճռականապես հանդես եկան Թուրքիային պաշտպանելու դիրքերից: Վերջինիս նկատմամբ խորհրդային տարածքային պահանջները դիտարկելով «կոմունիզմի ծավալումը զսպելու» դիրքերից, ԱՄՆ–ը և Մեծ Բրիտանիան չպաշտպանեցին ԽՍՀՄ քաղաքականությունը: Պատմական տվյալ փուլում խնդիրը ներքաշվեց ԽՍՀՄ–ի և Արևմուտքի առճակատման, սկսվող սառը պատերազմի գաղափարական, ռազմավարական և քաղաքական հակամարտության ոլորտը, ինչն էլ կանխորոշեց խորհրդային կողմի համար նրա բացասական ելքը:

<u>Երկրորդ ենթագլուխը՝</u> **«Ռազմապաշտպանական արդյունաբերության ձևավորումը: Ռազմական պատվերները և արտադրանքը»**, բաղկացած է չորս ենթահարցից:

<u>**Առաջին ենթահարցում՝**</u> **«Երևանի թիվ 447 ինքնաթիռաշինական գործարանի հիմնումը և շահագործումը»**, նշվում է, որ 1939 թ. ամռան–աշնանը ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն կարևոր որոշումներ ընդունեց «Ավիաշարժիչ գործարանների զարգացման» և «Գոյություն ունեցող ինքնաթիռաշինական գործարանների վերակառուցման ու նոր գործարանների շինարարության մասին»: ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության ժողկոմատին հանձնարարվեց զարկ տալ ինքնաթիռաշինական ձեռնարկությունների ստեղծմանը Կովկասում ու Անդրկովկասի խորհրդային հանրապետություններում: Ի կատարումն ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի հանձնարարականների՝ ՀամԿ(բ)Կ Կենտկոմը և ԽՍՀՄ կառավարությունը 1940 թ. սեպտեմբերի 19–ին ընդունեցին թիվ 1724–693 «խիստ գաղտնի» որոշումը՝ Երևանում ինքնաթիռաշինական գործարան (թիվ 447) կառուցելու մասին: Գործարանի նախագծման և կառուցման աշխատանքներն իրականացվելու էին ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության ժողկոմատի անմիջական ղեկավարությամբ և հսկողությամբ[33]: Շուտով Հայաստան տեղափոխվեցին ինքնաթիռաշինական գործարանի համար անհրաժեշտ սարքավորումներ, դրանք տեղադրելու համար ժամանեցին ԽՍՀՄ ավիացիոն գործարանների որակյալ մասնագետներ և, ինչպես իր հուշերում վկայում է ՀԽՍՀ պետական–կուսակցական գործիչ Ե. Ասծատրյանը,

[31] Тюленев И., Через три войны, М., 1960, с. 173.
[32] Տե՛ս Советская Армения в годы Великой Отечественной войны (1941–1945), էջ 183–185:
[33] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 24, գ. 136, թ. 4, 10–11, 16:



© National Library of Armenia

գործարանում արագ կազմակերպվեց արտադրությունը: Բայց, «ելնելով սկսված պատերազմի պայմաններից, կենտրոնական մարմինները որոշում են սառեցնել գործարանի շինարարությունը»[34]: Հայրենական պատերազմի սկսվելուց հետո ԽՍՀՄ կառավարության որոշումներով երկրում ընդհատվեց արդյունաբերական հարյուրավոր խոշոր ձեռնարկությունների շինարարությունը. Հայաստանում դրանց թիվը հասավ 30–ի: Վերջինների շինարարության համար նախատեսված ֆինանսական և նյութական միջոցներն ու աշխատուժն ուղղվեցին ռազմական պատվերներ կատարող ձեռնարկությունների կարողությունների ընդլայնմանը: Այդուհանդերձ, արդեն 1942 թ. աշնանից թիվ 447 գործարանում սկսեցին իրականացվել մարտերում վնասված ինքնաթիռների վերանորոգման աշխատանքներ: Մինչև 1942 թ. ավարտը գործարանում վերանորոգվեց 36 միավոր ինքնաթիռ: 1942 թ. հետ համեմատ 1943 թ. գործարանն առաջադրանքները գերակատարեց 46,4 %–ով[35]:

Ցուցաբերած տպավորիչ արդյունքների շնորհիվ Երևանի թիվ 447 գործարանը շուտով հայտնվեց ԽՍՀՄ ղեկավարության ուշադրության կենտրոնում: 1943 թ. դեկտեմբերի 1–ին լույս տեսավ ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության ժողկոմ Ա. Շախուրինի թիվ 716 «գաղտնի» հրամանը: Ի կատարումն ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի (ՊՊԿ) 1943 թ. հոկտեմբերի 8–ի թիվ 4290 «գաղտնի» որոշման՝ Շախուրինը հրամայում էր թիվ 447 գործարանում կազմակերպել «Յակ–3» ինքնաթիռների ագրեգատների արտադրությունը և, առաջին հերթին, Թբիլիսիում գտնվող թիվ 31 գործարանի համար պատրաստել ինքնաթիռների թևեր: Նկատի ունենալ, որ հետագայում թիվ 447 գործարանն անցնելու է ամբողջական կործանիչների ինքնուրույն թողարկմանը՝ թիվ 31 գործարանի հետ կոոպերացիայի միջոցով[36]: Արդեն 1943 թ. վերջին գործարանը տվեց առաջին արտադրանքը՝ խորհրդային «Յակ–3» կործանիչ ինքնաթիռների պահեստամասեր, թևեր և շասսիներ, իսկ պատերազմի ավարտական փուլում գործարանում կազմակերպվեց «ՈՒՏ–2Մ» ուսումնամարզական թեթև ինքնաթիռների շարային արտադրություն[37]:

Պատերազմի տարիներին թիվ 447 գործարանը մասնակցեց հանրապետության ռազմապաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների առջև կենտրոնական մարմինների կողմից դրված զինամթերքի, ռազմաճակատի համար այլ արտադրանքի պատվերների կատարմանը:

<u>**Երկրորդ ենթահարցում՝**</u> **«Արդյունաբերության վերակառուցումը և ռազմական արտադրության կազմակերպումը Հայրենական պատերազմի առաջին փուլում (1941–1942 թթ.)»**, ցույց է տրվում, որ Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից Խորհրդային Հայաստանն ամենայն պատասխանատվությամբ մասնակից էր դառնում ԽՍՀՄ ռազմապաշտպանական արդյունա–բերության առջև ԽՍՀՄ ՊՊԿ–ի կողմից դրված մեծածավալ խնդիրների լուծմանը: Իրավացի է հետազոտող Գ. Խաչատրյանը, երբ նշում է, որ «դրա իրականացման համար հանրապետությունում կային անհրաժեշտ նախապայմաններ, որոնցից հիմնականը բազմաճյուղ արդյունաբերությունն էր»[38]: Եվ իրոք, ինչպես ճիշտ

---

[34] Տե՛ս Ասծատրյան Ե., նշվ. աշխ., էջ 102:
[35] Տե՛ս Անանյան Լ., Հայկական ՍՍՀ արդյունաբերությունը զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում, էջ 30:
[36] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 23, գ. 57, թ. 180 և շրջ.:
[37] Տե՛ս Մանուկյան Հ., նշվ. աշխ., էջ 65: Տե՛ս նաև՝ ՀԱԱ, ֆ. 313, ց. 1, գ. 8, թ. 103–104:
[38] Տե՛ս Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին (Նորագույն ժամանակաշրջան. 1918–1945 թթ.), էջ 581:



© National Library of Armenia

նկատում է խնդիրն առաջիններից մեկն ուսումնասիրած Գ. Ալահվերդյանը, «Հանդիսանալով ԽՍՀՄ արդյունաբերական շրջաններից մեկը, Հայկական ԽՍՀ–ն պատերազմի նախօրյակին ուներ բավականին զարգացած ծանր արդյունաբերություն, որը մասնագիտացված էր գունավոր մետաղագործության և քիմիական արդյունաբերության մեջ: Այդ ճյուղերը կարևոր դերակատարում ունեին հանրապետության պաշտպանական արդյունաբերությունում»[39]:

Հանրապետության տնտեսությունը պատերազմի պահանջներին համապատասխան վերակառուցելու և ռազմականացնելու գործում մեծ դեր ունեցան ՀԽՍՀ կառավարությունը, կուսակցական, խորհրդային և իշխանության այլ մարմինները: Պատերազմի ընթացքում տեղի ունեցած ՀԿ(բ)Կ Կենտկոմի 13 պլենումներում քննարկման առարկա են դարձել ռազմական, ռազմատնտեսական և ռազմամոբիլիզացիոն բնույթի ավելի քան 30 կարևոր հարցեր[40]: Որոշիչ նշանակություն ունեցավ ՀԿ(բ)Կ Կենտկոմի 9–րդ պլենումը (1941 թ. նոյեմբերի 19–20–ը), որը խնդիր դրեց սեղմ ժամկետներում ավարտել հանրապետության ժողտնտեսության ամբողջական փոխադրումը ռազմական ուղու վրա, և առավելագույնս արդյունավետ օգտագործելով արտադրական կարողությունները՝ ամբողջությամբ անցնել ռազմական արտադրանքի պատվերների կատարմանը[41]: Գործադիր իշխանության կարևոր գործառույթներ էր իրականացնում ՀԽՍՀ ժողկոմխորհին կից գործող պետական կարգադրիչ մարմինը՝ «Համատեղ նիստը» («Փոքր ժողկոմխորհի նիստ»), որը ղեկավարում և համակարգում էր հանրապետության ռազմական տնտեսությունը, ռազմապաշտպանական արդյունաբերության աշխատանքները, ռազմական պատվերների կատարումը:

Առաջինը ռազմական պատվերներ սկսեցին կատարել ՀԽՍՀ թեթև արդյունաբերության և արհեստագործական կոոպերացիայի տեքստիլ ձեռնարկությունները: Երևանի կարի 1–ին և 2–րդ ֆաբրիկաներում, կաշվի գործարանում, Լենինականի տեքստիլ կոմբինատում, Ստեփանավանի և Կիրովականի արտելներում արտադրվում էին հրացանների համար ուսագոտիներ, ատրճանակի պատյաններ, զինվորական համազգեստ և այլն: Արդեն 1941 թ. վերջին Երևանի կարի ֆաբրիկաների, կաշվի գործարանի, Լենինականի տեքստիլ կոմբինատի արտադրանքի մեջ ռազմական պատվերների բաժինը կազմեց 100 %[42]:

Այդուհանդերձ, ռազմական արտադրանքի գլխավոր տեսականին զենքն ու ռազմամթերքն էր, որի արտադրությանը լծվեցին հանրապետության ծանր արդյունաբերության մեխանիկական, մետաղամշակման, գունավոր մետաղագործության, քիմիական մի շարք ձեռնարկություններ: Դրանց թվում էին Երևանի Ֆ. Ձերժինսկու անվան մեքենաշինական գործարանը, որն առաջինը ձեռնարկեց ռազմամթերքի արտադրությունը, ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության ժողկոմատի Երևանի ինքնաթիռաշինական թիվ 447, ԽՍՀՄ ականանետային սպառազինության ժողկոմատի Երևանի թիվ 722, ԽՍՀՄ ռետինե արդյունաբերության ժողկոմատի Կիրովի անվան «Սովպրեն» սինթետիկ կաուչուկի թիվ 742 գործարանը, Երևանի մեխանիկական և կարբիդի գործարանները, Երևանի տեղական արդյունաբերության մեխանիկական արհեստանոցը, Երևանի շարժիչների վերանորոգման գործարանը, Լենինականի մեխանիկական գործարանը, Արզնիի հանքային ջրերի գործարանի մեխանիկական արհեստանոցը, Կիրովականի Ա. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատը, Ալավերդու պղնձաձուլական գործարանը,

[39] Аллахвердян Г., նշվ. աշխ., էջ 3:
[40] Տե՛ս Советская Армения в годы Великой Отечественной войны (1941–1945), էջ 750:
[41] Տե՛ս նույն տեղում, էջ 101–102:
[42] Տե՛ս Անանյան Լ., Հայաստանի տնտեսական պատմության ուրվագծեր, էջ 181:



© National Library of Armenia

Կապանի հանքահարստացուցիչ ֆաբրիկան և այլն: Ձեռնարկություններում արտադրվում էր ռազմահանդերձանք, հրետանային գույքի և բանակային կապի միջոցների մասեր, ինչպես նաև ռազմամթերքի երեք տեսակ՝ հրկիզող ավիառումբերի, հակատանկային և հակահետևակային ականների պատյաններ[43]: Ընթացքի մեջ էր ականանետների, արկերի, ձեռքի նռնակների, այլ ռազմամթերքի արտադրության կազմակերպումը:

1942 թ. սկզբից հանրապետությունում ռազմապաշտպանական արտադրանքի պատվերներ կատարող արդյունաբերական ձեռնարկությունները նոր թափով շարունակեցին զենք ու զինամթերքի, ռազմական նշանակություն ունեցող այլ արտադրանքի արտադրությունը: 1942 թվականը Հայաստանի պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների համար դարձավ առանձնահատուկ տարի: Ոլորտի առաջատար ձեռնարկություններից մեկում՝ Ձերժինսկու անվան մեքենաշինական գործարանում, տարվա ընթացքում հաջողությամբ ընթացավ 50 մմ–ոց վաշտային ականանետների արտադրությունը: Գործարանն արտադրեց և ռազմաճակատ ուղարկեց 428 ականանետ՝ պահեստամասերի, գործիքների ու հարմարանքների լրակազմով: 1942 թ. կտրուկ ավելացավ արտադրվող ռազմամթերքի, հրետանային գույքի և ռազմահանդերձանքի տեսականին ու քանակը: Այս ցուցանիշն ամենաբարձրն էր պատերազմի բոլոր տարիների համեմատ:

__Երրորդ ենթահարցում՝__ **«Ռազմական արտադրության կազմակերպումը 1943–1944 թթ.»**, նշվում է, որ Ստալինգրադի ճակատամարտում խորհրդային զորքերի հաղթանակով (1943 թ. փետրվարի 2–ին) Հայրենական պատերազմում արմատական բեկում արձանագրվեց. վերացավ գերմանաֆաշիստական ուժերի և Թուրքիայի կողմից Կովկասին ու Անդրկովկասին սպառնացող վտանգը: Ուստի տարածաշրջանի, այդ թվում Հայաստանի, ռազմապաշտպանական արդյունաբերության ձեռնարկություններին տրվող ռազմական պատվերները հետզհետե նվազեցին: 1943 թվականից մինչև պատերազմի ավարտը Հայաստանում ամբողջությամբ դադարեցվեց վաշտային ականանետների, զենքի մասերի, զինամթերքի որոշ տեսակների, հրետանային և ինժեներական գույքի արտադրությունը:

ԽՍՀՄ ռազմական տնտեսության պատմության մեջ 1943 թ. համարվեց բեկման տարի: Խորհրդային բանակի ծանրակշիռ հաղթանակների հետ միասին այդ տարին նշանավորվեց ռազմական տնտեսության ամրապնդմամբ և զարգացմամբ: Դա նկատելի էր նաև Խորհրդային Հայաստանում: Կառավարության կողմից իրականացված համալիր միջոցառումների արդյունքում սկսեց արագ աճել հանրապետության խոշոր արդյունաբերության կարևոր ճյուղերից մեկի՝ մետաղամշակման արտադրանքը: Արդեն 1943 թ. հանրապետության արդյունաբերական արտադրանքի մեջ մետաղամշակման արտադրանքի տեսակարար կշիռը բարձրացավ 8,5 %–ի՝ 1940 թ. 4,4 %–ի դիմաց: Արդյունաբերության այդ ճյուղը պատերազմի տարիներին առավելագույն աճ արձանագրեց 1944 թ.[44]:

1943 թ. երկրորդ կեսից վերսկսվեց պատերազմի սկզբին ժամանակավորապես սառեցված ձեռնարկությունների շինարարությունը: ՀԽՍՀ–ում առաջինը վերսկսվեց, ինչպես արդեն նշել ենք, Երևանի թիվ 447 ինքնաթիռաշինական գործարանի շինարարությունը, այնուհետև՝ ռետինադողերի, պլաստմասաների, կաբելի և այլն: Միաժամանակ աշխատանքներ ծավալվեցին մետաղամշակման արդյունաբերության արմատական վերակառուցման և խոշոր մեքենաշինության՝ հաստոցաշինության և էլեկտրամեքենաշինության կազմակերպման ուղղությամբ:

---

[43] Տե՛ս Советская Армения в годы Великой Отечественной войны (1941–1945), էջ 327: Տե՛ս նաև՝ ՀԱԱ, ֆ. 113, ց. 33, գ. 75, թ. 3–4:
[44] Տե՛ս Аллахвердян Г., նշվ. աշխ., էջ 6:



© National Library of Armenia

1944 թ. հանրապետության տնտեսական կյանքում նշանակալի իրադարձություն էր ԽՍՀՄ ՊՊԿ–ի 1944 թ. հուլիսի 11–ի՝ Կիրովականում ազոտային գործարան կառուցելու, և օգոստոսի 6–ի՝ Երևանի թիվ 722 գործարանում ռազմական թռիչքադաշտերի համար կոմպրեսորային կայաններ արտադրելու մասին, որոշումները[45]:

Հանրապետության պաշտպանական արդյունաբերության ձեռնարկություններում ռազմամթերքի արտադրությունը շարունակվեց նաև 1944 թ., սակայն սահմանափակ քանակով: Պատերազմի ավարտական փուլում՝ 1945 թ. առաջին ամիսներին, հանրապետությունում ռազմաճակատի համար զենք և ռազմամթերք չի արտադրվել:

Հանրագումարի բերելով պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանում ռազմապաշտպանական արտադրանքի թողարկման հիմնական արդյունքները՝ պետք է արձանագրել, որ հանրապետությունում կառուցվել է 30 նոր ձեռնարկություններ և 110 արտադրամասեր, այդ թվում՝ ինքնաթիռաշինական, շարժիչների վերանորոգման, կոմպրեսորային, ավտոդողերի, պարկային գործվածքների, քիմիադեղագործական գործարաններ և այլն: Պատերազմի տարիներին ՀԽՍՀ արդյունաբերությունն իրացրեց արտադրանքի շուրջ 300 նոր տեսակի թողարկումը, որոնց զգալի մասն ուներ ռազմապաշտպանական նշանակության, այդ թվում՝ 10 անուն զինամթերքի, 1՝ զենքի, 6՝ կապի միջոցների, 47՝ գումակատնտեսական և իրային գույքի, 20՝ քիմիական նյութերի, 3՝ ինժեներական ծառայության գույքի, 6՝ հրետանային գույքի և այլն[46]: Ռազմապաշտպանական պատվերներ կատարող ձեռնարկություններում պատերազմի տարիներին արտադրվեց զինվորական հագուստի և գույքի ավելի քան 50 տեսակ[47]: Ռազմապաշտպանական նշանակություն ունեցող արտադրանքի թողարկմանը մասնակցեցին հանրապետության արդյունաբերության գրեթե բոլոր ճյուղերը, ՀԽՍՀ շուրջ հինգ տասնյակ մեծ ու փոքր գործարաններ և ֆաբրիկաներ, արտադրական այլ ձեռնարկություններ ու կազմակերպություններ: Ռազմապաշտպանական հիմնական արտադրության մեջ զբաղված անձանց թվաքանակը, համաձայն պաշտոնական տվյալների, հասնում էր 3600–ի[48]:

<u>**Չորրորդ ենթահարցում՝**</u> **«Հանրապետության գիտական ներուժը ռազմապաշտպանական ոլորտի աշխատանքներում»**, ցույց է տրվում, որ պատերազմի տարիներին հանրապետության պաշտպանական ոլորտի աշխատանքներում իր ծանրակշիռ մասնակցությունն ունեցավ նաև Հայաստանի գիտությունը: 1941 թ. նոյեմբերի 19–20–ը տեղի ունեցած ՀԿ(բ)Կ Կենտկոմի 9–րդ պլենումը կարևոր խնդիրներ դրեց վերջինիս առջև[49]: Առանց գիտատեխնիկական աջակցության հանրապետությունն ի զորու չէր ամենասեղմ ժամկետներում ավարտել տնտեսության ռազմական վերակառուցումը, առավել արդյունավետ օգտագործել արդյունաբերական ձեռնարկությունների արտադրական կարողությունները:

Պատերազմի սկզբից ևեթ Հայաստանի ակադեմիական և բուհական համակարգի գիտահետազոտական ինստիտուտներն, ամբիոններն ու լաբորատորիաները մեծ եռանդով ներգրավվեցին այն խնդիրների մշակմանն ու իրականացմանը, որոնք առաջնակարգ նշանակություն ունեին պատերազմի պայմաններում երկրի պաշտպանունակության ամրապնդման, ռազմական արտադրանքի կատա-

---

[45] Տե՛ս Советская Армения в годы Великой Отечественной войны (1941–1945), էջ 281, 287:
[46] Տե՛ս նույն տեղում, էջ 310–311: Տե՛ս նաև՝ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 75 , թ. 39–40:
[47] Տե՛ս Советская Армения в годы Великой Отечественной войны (1941–1945), էջ 332–334.
[48] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 33, գ. 74, թ. 4–9:
[49] Տե՛ս Советская Армения в годы Великой Отечественной войны (1941–1945), էջ 103–104:



© National Library of Armenia

րելագործման, բանակի մարտունակության բարձրացման համար: Հայ գիտնականներն իրենց ուսումնասիրություններով ու գյուտերով, նորարարական առաջարկություններով նշանակալի ավանդ ունեցան հանրապետության պաշտպանական արդյունաբերության ձևավորման և զարգացման գործում:

1943 թ. նոյեմբերին Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի հիմնադրումով հայ գիտնականներն առավել հիմնարար աշխատանքներ ծավալեցին ռազմապաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների առջև ծառացած արտադրական գործընթացների կատարելագործման և այլ խնդիրների լուծման ուղղությամբ: Այդ ուսումնասիրություններից հատկապես կարևոր էր պղտոր միջավայրում լույսի ցրման տեսությունը: Այն մշակեց աշխարհահռչակ գիտնական Վ. Համբարձումյանը՝ իր իսկ առաջ քաշած ինվարիանտության սկզբունքի հիման վրա: Տեսությունն արագորեն լայն կիրառություն ստացավ գիտության ու տեխնիկայի տարբեր ոլորտներում, հատկապես ռազմական նպատակներով, լայնորեն օգտագործվեց գիշերային նշանառուցյան օպտիկական սարքերի թողարկման ասպարեզում[50]:

Պատերազմի տարիներին գիտության տարբեր ոլորտների մասնագետների, հատկապես երկրաբանների, քիմիկոսների, ֆիզիկոսների, կենսաբանների ու դեղագործների գիտական հետազոտությունների արդյունքները նպաստեցին երկրի ռազմապաշտպանական արդյունաբերության զարգացմանը, խորհրդային բանակի մարտունակության բարձրացմանը:

**<u>ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝</u> «Հայաստանը խորհրդային ՌԱՀ–ի համակարգում հետպատերազմյան առաջին տասնամյակներին (1945–1960–ական թթ.)»**, բաղկացած է չորս ենթագլխից:

**<u>Առաջին ենթագլխում՝</u> «Գերմանական ռազմավարի դերը Խորհրդային Հայաստանի արդյունաբերության առաջատար ճյուղերի զարգացման գործում»**, ցույց է տրվում, որ հետպատերազմյան առաջին տարիներին խորհրդային երկրի քայքայված տնտեսության վերականգնման, ինչպես նաև բոլոր տեսակի պաշարների ու միջոցների ավելացման հիմնական աղբյուր հանդիսացան ռազմատուգանքների (ռեպարացիաների) գծով Գերմանիայից, ինչպես նաև նրան դաշնակից երկրներից նախատեսված «հատուկ ներմուծումները»՝ ռազմավարը: Ի թիվս խորհրդային մյուս հանրապետությունների՝ «գերմանական ռազմավարի» իր չափաբաժինը ստացավ նաև Խորհրդային Հայաստանը՝ տեղական արդյունաբերությունը վերազինելու, նոր գործարաններ և արտադրամասեր հիմնելու համար: Հատկացումները կատարվեցին ԽՍՀՄ կառավարության հատուկ որոշումներով: Այսպես՝ 1946 թ. ապրիլի 9–ի թիվ 797–319 «գաղտնի» որոշմամբ ՀԽՍՀ տեղական արդյունաբերության նախարարությանը հատկացվեցին գերմանական 4 ձեռնարկությունների արտադրական հոսքեր: Դրանց սարքավորումների ապամոնտաժման աշխատանքները վերահսկելու, սարքավորումներն ընդունելու և դեպի հանրապետություն փոխադրելու նպատակով ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունյանի հանձնարարությամբ 1946 թ. ապրիլի 18–ին չորս ինժեներից բաղկացած խմբի գլխավորությամբ Բեռլին մեկնեց ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահի տեղակալ Գ. Չոլախյանը[51]: 1946 թ. ապրիլի 4–ի որոշումով ՀԽՍՀ ժողկոմխորհը հավանության էր արժանացրել նաև Հայաստանի ԳԱ նախագահության առաջարկությունը՝ գիտատեխնիկական գրականություն և լաբորատոր սարքավորումներ ձեռք բերելու նպատակով ակադեմիայի անդամ Վ. Իսա-

[50] Арутюнян К., Саакян М., Участие сотрудников Национальной Академии наук Республики Армения в Великой Отечественной войне (1941–1945), Е., 2001, с. 10–11.
[51] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 26, գ. 45, թ. 378–383:



© National Library of Armenia

գուլյանցին և գիտաշխատող Գ. Տեր–Ստեփանովին Գերմանիա գործուղելու մասին[52]:

ՀԽՍՀ պատվիրակության ու նրա ղեկավարի հաստատակամության շնորհիվ ԽՍՀՄ կառավարության որոշմամբ Հայաստանի համար նախատեսված 4 ձեռնարկությունների 764 միավոր սարքավորումների փոխարեն սարքահանվում և հանրապետություն են տեղափոխվում 5 ձեռնարկությունների 1092 միավոր սարքավորումներ: 1946 թ. մայիսի 31–ի դրությամբ (բացի ավելի վաղ բեռնված և Հայաստան ուղարկված սարքավորումներից) ԽՍՀՄ գերատեսչական տարբեր նախարարությունների գծով սարքահանվել և հանրապետության համար բեռնվել են հետևյալ ձեռնարկությունները.

1. Զոներֆելդ քաղաքում գտնվող «Հայնցման» մեքենաշինական գործարանը՝ ավտոմոբիլային արդյունաբերության նախարարության գծով (գործարանի հաստոցները հատկացվելու էին Երևանի և Լենինականի մեխանիկական գործարաններին):

2. Մյուլքենբերգ քաղաքի «Հեմովերկ» ֆիրմայի քիմիական գործարանը՝ քիմիական արդյունաբերության նախարարության գծով (գործարանի բարձրարժեք սարքերը տեղադրվելու էին Կիրովականի քիմիական գործարանում):

3. Կաբելի գործարանը՝ էլեկտրոնային արդյունաբերության նախարարության գծով (տեղադրվելու էր մայրաքաղաք Երևանում):

4. Սաքսոնիայի մարզի Մյուգելն քաղաքի հախճասալիկների ու ճենապակյա իրերի և Միտվայդա քաղաքի կերամիկական խողովակների գործարանները՝ շինանյութերի արտադրության նախարարության գծով (հատկացվելու էին Լենինական քաղաքին):

5. Տոլխայմա քաղաքի «Շլիտտեր» ֆիրմայի գուլպաների ֆաբրիկան՝ 16 կոտտոն–մեքենաներով (բամբակի մշակման մեքենաներ)՝ թեթև արդյունաբերության նախարարության գծով (հատկացվելու էին Երևանի և Լենինականի կարի ֆաբրիկաներին):

6. Մեքլենբուրգի մարզի Մալխով քաղաքի մահուդի ֆաբրիկան՝ տեքստիլ արդյունաբերության նախարարության գծով (տեղադրվելու էր Երևանում):

7. Մեքլենբուրգի մարզի Շտրալզունդ քաղաքի գարեջրի գործարանը՝ սննդարդի նախարարության գծով (տեղադրվելու էր Երևանում):

1946 թ. հունիս ամսվա բեռնափոխադրումների պլանի մեջ ներառվել էին գերմանական հետևյալ ձեռնարկությունները.

1. Օրանենբուրգ քաղաքի պղնձաէլեկտրալուծույթային գործարանը՝ գունավոր մետաղագործության նախարարության գծով (տեղադրվելու էր Ալավերդու պղնձաձուլական համալիրում):

2. Լաուտա քաղաքի «Լաուտավերկ» ալյումինի կոմբինատի մասնաշենքի մետաղյա կառուցվածքը՝ գունավոր մետաղագործության նախարարության գծով (Քանաքեռի ալյումինի գործարանի համար):

3. Շտրալզունդ քաղաքի «Կառլ Բեկկեր» լաքե–գունավորման գործարանը՝ տեղական արդյունաբերության նախարարության գծով (տեղադրվելու էր Երևանում):

4. «Ադոլֆ Լանգ» հաստոցաշինական գործարանը՝ հաստոցաշինության նախարարության գծով (Երևանի Ձերժինսկու անվան գործարանի համար):

Գերմանիայում աշխատանքներն ավարտելուց հետո Գ. Չոլախյանը վերադառնում է Մոսկվա, որտեղ կատարում էր Միութենական կառավարությունում

---

[52] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 26, գ. 592, թ. 1:



© National Library of Armenia

ՀԽՍՀ մշտական ներկայացուցչի պարտականությունները: Գործուղման արդյունքների վերաբերյալ Մոսկվայում 1946 թ. հունիսի 4–ին պատրաստած հանգամանալի հաշվետվության մեջ՝ ուղղված Գ. Հարությունյանին, Չոլախյանը ներկայացնում է ՀԽՍՀ տեղական արդյունաբերության նախարարության գծով ստացվող գերմանական ձեռնարկությունների սարքավորումների տեխնիկական բնութագրերը: Նա անհրաժեշտ է համարում, որպեսզի Հայաստանում անհապաղ իրականացվեն նախապատրաստական մի շարք միջոցառումներ՝ ստացվող ամբողջական գործարաններն ու դրանց սարքավորումներն ընդունելու, դրանք տեղադրելու համար համապատասխան կառույցներ հատկացնելու և արդյունավետ օգտագործելու համար[53]:

Գերմանիայից Հայաստան տեղափոխված ռազմավարի շնորհիվ շեշտակի վերելք ապրեց հանրապետության արդյունաբերությունը, հատկապես՝ ծանր, նրա ձեռնարկությունները համալրվեցին թանկարժեք և արդիական նոր սարքավորումներով: Այս ամենի շնորհիվ հետպատերազմյան առաջին տարիներին ՀԽՍՀ արդյունաբերությունը զարգանում էր արագացված տեմպերով և աճի մակարդակով ԽՍՀՄ–ում առաջիններից էր: Այդ մասին են վկայում հետևյալ ցուցանիշները: Եթե 1940 թ. համեմատությամբ 1950 թ. սկզբին ԽՍՀՄ–ում մեքենաշինության և մետաղամշակման ոլորտի աճը կազմում էր 215 %, իսկ ամբողջ արդյունաբերությանը՝ 173, ապա Խորհրդային Հայաստանում՝ 720 և 249 %[54]: Հայաստանի մեքենաշինության և մետաղամշակման արդյունաբերության աճի ցուցանիշը գերազանցում էր միջին միութենականը գրեթե 3.5 անգամ, և այս ցուցանիշով Հայաստանը միութենական հանրապետությունների մեջ անվիճելի առաջատար էր:

<u>Երկրորդ ենթագլխում</u>՝ **«Խորհրդային ՌԱՀ–ի կազմակերպման և զարգացման առաջնահերթությունները, կառավարման համակարգը»,** նշվում է, որ Հայրենական պատերազմի ավարտից անմիջապես հետո ԽՍՀՄ ղեկավարությունը քայլեր ձեռնարկեց երկրի տնտեսությունը վերականգնելու, այն խաղաղ հիմքերի վրա փոխադրելու ուղղությամբ: «Սպառազինության արտադրանքի կրճատման կապակցությամբ արդյունաբերության վերակառուցման միջոցառումների մասին» ՊՊԿ–ի 1945 թ. մայիսի 26–ի որոշումով վերակառուցման էր ենթակա նաև երկրի ռազմապաշտպանական արդյունաբերության ոլորտը: Նախատեսվում էր մի շարք ձեռնարկությունների փոխադրումը քաղաքացիական արտադրանքի ամբողջական կամ մասնակի արտադրությանը[55]: Իհարկե, դա չէր վերաբերվում ՌԱՀ–ի այն ոլորտներին, որոնք ներգրավված էին միջուկային զենքի, զենիթահրթիռային սպառազինության և ռադիոտեղորոշումային նորագույն տեխնիկայի ստեղծման աշխատանքներում: Այդ սպառազինության կատարելագործմանն էին միտված ԽՍՀՄ կառավարության 1946 թ. մի շարք որոշումները. մայիսի 13–ի՝ «Ռեակտիվ սպառազինության հարցերի մասին», հուլիսի 10–ի և օգոստոսի 24–ի՝ ռադիոտեղորոշումային արդյունաբերության զարգացման մասին[56]: Որոշումները խթանեցին հետպատերազմյան առաջին տարիներին ԽՍՀՄ–ում, այդ թվում Հայաստանում, սարքաշինության, էլեկտրոնային, էլեկտրամեխանիկական, ռադիոտեխնիկական, արտադրության այլ ճյուղերի զարգացումը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտով միջազգային լարվածությունն աշխարհում ամբողջությամբ չլիցքաթափվեց: Ռազմաքաղաքական երկու

---

[53] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 26, գ. 45, թ. 378–383:
[54] Տե՛ս Розенфельд С., Клименко К., նշվ. աշխ., էջ 415:
[55] Տե՛ս Симонов Н., նշվ. աշխ., էջ 194:
[56] Տե՛ս նույն տեղում, էջ 233, 254: Տե՛ս նաև՝ Быстрова И., նշվ. աշխ., էջ 559:



© National Library of Armenia

հզոր դաշինքների՝ ՆԱՏՕ–ի և «Վարշավայի պայմանագրի կազմակերպության» ձևավորումով սառը պատերազմը վերջնականապես մտավ «սպառազինության մրցավազքի», առաջին հերթին՝ միջուկային և հրթիռային զենքի, գերլարված շրջափուլ: Հակադիր դաշինքների առաջատար երկրներ հանդիսացող ԱՄՆ–ում և ԽՍՀՄ–ում վերջնականապես ձևավորվում են ռազմաարդյունաբերական համալիրները, այն տեսքով, որը բնորոշ էր 1950–1980–ական թվականների ՌԱՀ–ին:

ԽՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ն. Խրուշչովի օրոք (1953–1964 թթ.) ԽՍՀՄ–ում 1957 թ. ձեռնարկված վարչատնտեսական, այսպես կոչված, «խրուշչովյան ռեֆորմներում», ՌԱՀ–ի կառավարման խնդիրներն առանցքային տեղ էին գրավում: Խորհրդային ռազմապաշտպանական արդյունաբերության կատարելագործմանն ու զարգացմանը, նրա կարողությունների բազմապատկմանն էր միտված «Արդյունաբերության պաշտպանական ճյուղերի մասին» ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1957 թ. օգոստոսի 10–ի որոշումը[57]: Ընդունելի է հիմնախնդրի ռուսաստանցի մի շարք հետազոտողների այն պնդումը, որ 1945–1964 թթ. ժամանակաշրջանը համարվում է ԽՍՀՄ ՌԱՀ–ի ձևավորման ավարտի շրջանը:

Սառը պատերազմի առաջին տարիներից խորհրդային արդյունաբերության ռազմապաշտպանական ոլորտը սկսեց մեկուսանալ, առանձնանալ արդյունաբերության քաղաքացիական արտադրանքի ոլորտից: Ռազմական ոլորտի գիտական և արտադրական գործընթացները գաղտնի պահելու, ինչպես նաև սպառազինության հատուկ արտադրություն կազմակերպելու նպատակով ՌԱՀ–ի կազմում գտնվող կազմակերպությունների և ձեռնարկությունների համար հաստատվեց տարբեր առանձնահատկություններով հատուկ ռեժիմի մի քանի մակարդակ: Ցածրը ներկայացնում էին փակ ձեռնարկությունները և «փոստային արկղերը» (փ/ա), որոնք աշխատում էին մեծ քաղաքների տարածքում: Հաջորդ մակարդակն արտաքին տեսքից սովորական քաղաքներն ու բնակեցված տարածքներն էին, ուր արտասահմանցիների մուտքն արգելված էր: Վերջապես, ամենաբարձր մակարդակը՝ ԽՍՀՄ որոշ շրջաններում առաջ եկած, այսպես կոչված «փակ քաղաքներն» էին, որոնք անմիջականորեն առնչվում էին միջուկային մշակումների հետ և պատկանում էին ատոմային գերատեսչությանը՝ ԽՍՀՄ միջին մեքենաշինության նախարարությանը: Դրանց թիվն ամբողջ երկրում տասն էր[58]: Խորհրդային Հայաստանում «փակ քաղաքներ» չկային, բայց գոյություն ունեին փակ կազմակերպություններ և ձեռնարկություններ, «փոստային արկղեր»: Ուստի «գաղտնիության ռեժիմի» պահպանման խնդիրը գտնվում էր հանրապետության ղեկավարության ուշադրության ներքո:

1945 թ. մայիսի 26–ի վերը հիշատակված որոշումով վերակառուցման էր ենթակա նաև ռազմապաշտպանական արդյունաբերության կառավարման համակարգը: Փոփոխությունների արդյունքում կրճատվեցին պաշտպանական ոլորտի ժողկոմատները՝ լուծարվեցին ԽՍՀՄ ռազմամթերքների, ականանետային սպառազինության և տանկային արդյունաբերության ժողկոմատները: Ռազմական արտադրության կազմակերպումն այսուհետ կենտրոնացվելու էր ԽՍՀՄ սպառազինության, ավիացիոն, նավաշինական արդյունաբերության, գյուղատնտեսական և տրանսպորտային մեքենաշինության ժողկոմատներում (1946 թ. մարտից՝ նախարարություններ)[59]: Խորհրդային ՌԱՀ–ի կառավարման համակարգում հետպատերազմյան տարիներին հետևողականորեն ամրապնդվում էր 1957 թ. ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահությանը կից ստեղծված Ռազմաարդյու-

---

[57] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 37, գ. 39, թ. 66–68:
[58] Տե՛ս Быстрова И., նշվ. աշխ., էջ 600–601:
[59] Տե՛ս Симонов Н., նշվ. աշխ., էջ 194: Տե՛ս նաև՝ Быстрова И. նշվ. աշխ., էջ 237, 240:



© National Library of Armenia

նաբերական հանձնաժողովի համակարգող դերը, նրա միջոցով էին անցնում ոլորտի բոլոր արմատական որոշումները[60]:

Ն. Խրուշչովի պաշտոնանկությունից հետո, երբ կասեցվեցին նաև «խրուշչովյան ռեֆորմները», 1964 թ. վերջերից սկսվում է ՌԱՅ–ի համակարգի ձեռնարկությունների հերթական «հավաքագրումը» կենտրոնացված ճյուղային նախարարություններում: Շուտով վերջնականապես ձևավորվում է պաշտպանական արդյունաբերության նախարարությունների այսպես կոչված «իննյակը», որոնցում հիմնականում կենտրոնացված էին ռազմական արտադրանք թողարկող պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունները: Դրանք էին՝ ավիացիոն, պաշտպանական, նավաշինության, քիմիական, էլեկտրոնային, էլեկտրատեխնիկական արդյունաբերությունների, ընդհանուր մեքենաշինության (այստեղ կենտրոնացված էին հրթիռատիեզերական տեխնիկայի ստեղծման աշխատանքները), ռադիոարդյունաբերության, միջին մեքենաշինության նախարարությունները[61]: Խորհրդային ՌԱՅ–ի կառավարման նշված համակարգը գրեթե անփոփոխ տեսքով գոյություն ունեցավ մինչև ԽՍՀՄ–ի կազմալուծումը 1991 թ.:

Այսպիսով, հետպատերազմյան առաջին տասնամյակներին ձևավորվեցին ԽՍՀՄ ռազմատնտեսական քաղաքականության և ՌԱՅ–ի առաջնահերթությունները, կատարելագործվեց նրա կառավարման համակարգը: Նշված ժամանակաշրջանում խորհրդային ՌԱՅ–ը ներկայանում էր իբրև ԽՍՀՄ սոցիալ–տնտեսական համակարգի հիմքը, որոշիչ էր դառնում նրա դերը խորհրդային երկրի կուսակցական–պետական կյանքում:

**<u>Երրորդ ենթագլխում</u>՝ «ՀԽՍՀ արդյունաբերության ռազմապաշտպանական ճյուղի ձեռնարկությունների ներգրավվածությունը խորհրդային ՌԱՅ–ում և նրանց արտադրանքը»**, ցույց է տրվում, որ հետպատերազմյան առաջին իսկ տարիներից Խորհրդային Հայաստանում արագացված տեմպերով սկսվում է իրագործվել ռազմական սպառման ապրանքների նոր տեսակների արտադրությունը, առաջին հերթին զարկ է տրվում էլեկտրամեքենաշինական, սարքաշինական, էլեկտրատեխնիկական և ռադիոտեխնիկական արդյունաբերության զարգացմանը: Էլեկտրամեքենաշինության բուռն զարգացման հիմքերը Հայաստանում դրվեցին արդեն 1946 թ.: Այսպես, ԽՍՀՄ մեքենաշինության և սարքաշինության նախարարության Երևանի թիվ 722 գործարանը, որը դեռևս պատերազմի ավարտական փուլում մասնագիտացվել էր ռազմական թռիչքադաշտերի համար կոմպրեսորային կայաններ թողարկելու մեջ, կենտրոնական ռազմական գերատեսչության պատվերներով 1946 թ. գարնանից վերսկսում է կայանների արտադրությունը[62]: Շարունակում էր ռազմական արդյունաբերության պատվերներ կատարել Երևանի թիվ 447 ինքնաթիռաշինական գործարանը: Պատերազմի ավարտից հետո տարբեր տեսակետներ առաջացան գործարանի հետագա մասնագիտացման հարցում, վարկածների թվում էր նաև գործարանի հիմքի վրա Հայաստանում ուղղաթիռների կամ տանկերի արտադրության կազմակերպումը: Սակայն Մոսկվայում ամենևին էլ հակված չէին միութենական հանրապետություններում նման գործարանների կառուցմանը, գլխավոր հակառակորդների թվում էր անձամբ Լ. Բերիան, ով պատերազմից հետո էլ շարունակում էր վերահսկել խորհրդային ռազմապաշտպանական արդյունաբերության գլխավոր ճյուղերը[63]: Խորհրդային կառավարության որոշմամբ թիվ 447 գործարանն ամբողջությամբ մասնագիտաց-

---

[60] Տե՛ս Отечественный военно–промышленный комплекс и его историческое развитие, էջ 62–63:
[61] Տե՛ս Быстрова И., նշվ. աշխ., էջ 255–256:
[62] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 26, գ. 215, թ. 42:
[63] Տե՛ս Հայաստանի ժողտնտխորհի վերջին նախագահը: Գուրգեն Չոլախյան, էջ 8–9:



© National Library of Armenia

վեց էլեկտրատեխնիկական արտադրանք թողարկող ձեռնարկության և 1947 թ. փոխանցվեց ԽՍՀՄ էլեկտրաարդյունաբերության նախարարությանը: ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1951 թ. դեկտեմբերի 15–ի որոշմամբ գործարանն իրացնում է խորհրդային ռազմական տեխնիկայի և սպառազինության, մասնավորապես ռադիոտեղորոշումային կայանների սնուցման համար տարբեր հզորության ուժային էլեկտրատրանսֆորմատորների, գեներատորների, շարժական էլեկտրակայանների արտադրությունը[64]: 1954 թ. թիվ 447 գործարանը վերանվանվեց Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանի՝ «Հայէլեկտրագործարան»:

Խորհրդային Հայաստանում էլեկտրատեխնիկական արդյունաբերության զարգացմանը զուգահեռ 1950–ական թթ. վերջերից բուռն առաջընթաց ապրեցին ռազմական սարքաշինությունը և ռադիոէլեկտրոնային արդյունաբերությունը: Այդ ճյուղերի հետագա զարգացմանն էին միտված ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի մի շարք որոշումները, այդ թվում 1958 թ. հունվարի 29–ի՝ սարքաշինության[65] և 1961 թ. հունիսի 9–ի՝ ռադիոէլեկտրոնային արդյունաբերության հետագա զարգացման մասին[66]:

Երևանի մետաղակերամիկայի և կիսահաղորդիչների գործարանի հիմքի վրա 1958 թ. ստեղծվեց «Տրանզիստոր» ձեռնարկությունը: Այստեղ ԽՍՀՄ–ում առաջիններից մեկը 1960–1961 թթ. կազմակերպվեց ռադիոէլեկտրոնային ապրանքների՝ կիսահաղորդչային ուժային դիոդների, տրիոդների (տրանզիստորների) և տիրիստորների արտադրություն: Կիսահաղորդչային սարքերի օգտագործումը ռազմական կապի միջոցներում և ռադիոտեղորոշումային համակարգերում հնարավորություն տվեցին կատարելագործել խորհրդային ռազմական տեխնիկան: Ռադիոլամպերի համեմատությամբ կիսահաղորդչային սարքերը փոքրածավալ էին և բավականին ամուր, դրանք կարևոր դեր խաղացին էլեկտրոնային հաշվիչ մեքենաների (ԷՀՄ), նոր սերնդի ռազմական տեխնիկայի, հրթիռաշինության զարգացման գործում[67]:

Հետպատերազմյան տարիներին խորհրդային ռազմապաշտպանական ոլորտում շարունակեց ծանրակշիռ ներդրում ունենալ Հայաստանի քիմիական արդյունաբերությունը: Արդեն հետպատերազմյան առաջին հնգամյակի վերջին Կիրովի անվան գործարանը շահագործման հանձնեց նոր արտադրանքի՝ էմուլսիային պոլիքլորոպրենային կաուչուկի արտադրամասը, որն անվանվեց «Նաիրիտ»[68]: Կիրովականի ազոտային հանքանյութերի գործարանին կից 1946 թ. կառուցված էլեկտրոլիզի գործարանում 1950–ական թթ. սկսվեց սինթետիկ կորունդի, մելամինի, երկրի ռազմապաշտպանական կարիքների, խորհրդային բանակի և ռազմական տեխնիկայի համար նախատեսված քիմիական այլ նյութերի արտադրություն: Այստեղ էր արտադրվում «ատոմային և ջրածնային ռումբերի պատրաստման համար անհրաժեշտ բաղադրամաս հանդիսացող, այսպես կոչված, «ծանր ջուրը», առանց որի հնարավոր չէր արձակել նշված ռումբերը»[69]: ԽՍՀՄ «միջուկային ծրագրի» պատասխանատուների կողմից հաստատված պլանի համաձայն՝ 1952–1971 թթ. գործարանում տարեկան արտադրվել է 3600 կգ «ծանր ջուր», 20 տարում՝ 72000 կգ[70]:

---

64 Տե՛ս նույն տեղում, էջ 135–136:
65 Տե՛ս նույն տեղում, էջ 145:
66 Տե՛ս Заробян Н., Яков Заробян и его эпоха, էջ 141:
67 «Հայաստան» հանրագիտարան, Ե., 2012, էջ 501:
68 Տե՛ս Григорьянц А., նշվ.աշխ., էջ 290–291:
69 Ասծատրյան Ե., նշվ.աշխ., էջ 36:
70 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, թ. 216–218:



© National Library of Armenia

Արդեն հետպատերազմյան 13 տարիների ընթացքում հանրապետությունում կառուցված և շահագործման հանձնված 200 նոր արդյունաբերական ձեռնարկությունների զգալի մասը սպասարկում էր երկրի ռազմաարդյունաբերական ոլորտը: Հայաստանում 1958 թ. արտադրվում էր բարձր որակի մոլիբդեն, պղինձ, ալյումին, կաուչուկ, քիմիական տարբեր նյութեր, պլաստմասսաներ, էլեկտրագեներատորներ, տրանսֆորմատորներ, շարժական էլեկտրակայաններ, կոմպրեսորներ, հիդրոտուրբիններ, կաբելներ, ճշգրիտ էլեկտրասարքավորումներ, հրակայուն նյութեր և այլն: Այդ արտադրանքի գերակշիռ մասն ուներ ռազմապաշտպանական նշանակություն:

Սկսած 1960 թ. Խորհրդային Հայաստանի մասնակցությունը ԽՍՀՄ ՌԱՀ–ում ձեռք է բերում որակական նոր, առավել կանոնակարգված և հաստատագրված բնույթ, և դա շնորհիվ նախորդ տարիների տպավորիչ արդյունքների: Այսուհետ Հայկական ԽՍՀ–ի յուրաքանչյուր հաշվետու տարվա ռազմական արտադրանքի վերաբերյալ ստուգիչ–հսկիչ առաջադրանքներն ընդունվում են ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի փակ նիստերում՝ ի կատարումն ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի՝ «Հաշվետու տարվա համար ռազմական տեխնիկայի արտադրության գծով ստուգիչ–հսկիչ առաջադրանքների մասին» համապատասխան որոշումների: ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի կողմից ընդունված որոշումներով և հանձնարարականներով նիստերի արձանագրությունները «խիստ գաղտնի» գրիֆով ուղարկվում էին Հատուկ բաժին՝ «Հատուկ թղթապանակ» (“Особая папка”) վերտառությամբ: Դրանք, ինչպես նշել ենք, սկսեցին աստիճանաբար գաղտնազերծվել միայն ԽՍՀՄ փլուզումից հետո:

1961–1965 թթ. ռազմական արտադրանքի պլանով մեծ ծավալի աշխատանքներ էին նախատեսված Հայաստանի ռազմապաշտպանական ոլորտի առաջատար Հայէլեկտրագործարանի համար: Այստեղ ռազմական էլեկտրատեխնիկայի գծով պետք է պատրաստվեին վրագետնյա հատուկ էլեկտրաուժային սարքավորումներ, ռադիոտեղորոշումային կայաններ և ռազմական կապի միջոցներ՝ «Կրուգ», «Կուբ», «Դալ», «Ս–75Մ» («Վոլխով»), «Ս–120», «Ս–125» («Նևա»), առավել կատարելագործված «Ս–200» խորհրդային զենիթահրթիռային նորագույն համակարգերը լրակազմելու համար[71]:

1964–1965 թթ. ռազմական արտադրանքի պլանով ՀԽՍՀ–ում նախատեսվում էր ռազմատեխնիկական գույքի, հատուկ միջոցների առանձին հանգույցների և լրակազմ ապրանքների մատակարարումը նաև սոցիալիստական և տնտեսական առումով թույլ զարգացած երկրներին: Այսպես, ՀԽՍՀ ժողտնտխորհի ձեռնարկությունների կողմից էլեկտրական սնուցման ագրեգատներ պետք է առաքվեին Լեհաստան՝ 11, Կուբա՝ 8, Իրաք՝ 10, Գանա՝ 5 հատ, նաև՝ Կորեայի ժողովրդա–դեմոկրատական և Մոնղոլիայի ժողովրդական հանրապետություններ[72]:

Խորհրդային Հայաստանում պարբերաբար իրականացվում էին ռազմապաշտպանական, քաղաքացիական պաշտպանության, մոբիլիզացիոն պաշարների ստեղծման և կուտակման միջոցառումներ, կառուցվեցին ապաստարաններ և այլն: Ի կատարումն ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1962 թ. փետրվարի 19–ի և 1963 թ. նոյեմբերի 4–ի որոշումների՝ ՀԿԿ Կենտկոմը և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահությունը 1963 թ. մայիսի 7–ին և նոյեմբերի 30–ին ընդունում են որոշումներ «Զանգվածային ոչնչացման զենքից

---

[71] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 77, գ. 483, թ. 1–10, նաև՝ ֆ. 1, ց. 126, գ. 4, թ. 11–13, գ. 6, թ. 27–29:
[72] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 77, գ. 655, թ. 1–3, գ. 738, թ. 1–3:



© National Library of Armenia

բնակչության պաշտպանության հանրապետության պատրաստվածության բարձրացման մասին» և «Զանգվածային ոչնչացման զենքից հանրապետության բնակչության պաշտպանության միջոցառումների մասին»: Դրանցով մասնավորապես նախատեսվում էր Երևանում, Լենինականում և հանրապետության այլ բնակավայրերում կառուցել թաքստոցներ և ապաստարաններ[73]:

1960–ական թթ. հանրապետական իշխանությունները սկսեցին առավել կարևորել ռազմապաշտպանական ոլորտի արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների մասնաճյուղերի և առանձին արտադրամասերի ստեղծումը հանրապետության տարբեր շրջաններում: Կենտրոնական իշխանությունների հետ համատեղ ձեռնարկած համալիր միջոցառումների արդյունքում կառուցվեցին և շահագործման հանձնվեցին Լենինականի միկրոէլեկտրաշարժիչների և կոնդենսատորների (կուտակիչների), Արթիկի վակումային էլեկտրական վառարանների, Մարալիկի մագնիսային արագացուցիչների և հիդրոապարատների, Ստեփանավանի բարձր հաճախականության էլեկտրասարքավորումների, Կիրովականի բարձր ջերմաստիճանային տաքացուցիչների, Դիլիջանի «Իմպուլս», Ապարանի ռադիոտեխնիկական իրերի, Արզնիի ճշգրիտ տեխնիկական քարերի, Հրազդանի սարքաշինական, Չարենցավանի հաստոցաշինական, Սևանի ապակեթելերի (էլեկտրամեկուսիչների), Կամոյի (Գավառ) կաբելի և սարքաշինական («Կամոսարք»), կոնդենսատորների գործարանները ու արտադրամասերը: Նշելի է, որ Երևանի ալյումինի գործարանում փայլաթիթեղի (ֆոլգա) թողարկումը նպաստեց հանրապետությունում էլեկտրոլիտային կոնդենսատորների արտադրության զարգացմանը, նոր արտադրամասերի հիմնմանը: Կամոյի կոնդենսատորների գործարանի մասնաճյուղեր բացվեցին Վարդենիս և Լանջաղբյուր ավաններում: Հայաստանի իշխանությունների առաջարկով ԽՍՀՄ ռադիոէլեկտրոնային արդյունաբերության նախարարությունը շուտով որոշում է հանրապետությունում գործող կոնդենսատորների գործարանների և կոնդենսատորաշինության նախագծային կոնստրուկտորական բյուրոների ներառմամբ ՀԽՍՀ–ում ստեղծել էլեկտրոլիտային կոնդենսատորների արտադրության «Դիպոլ» արտադրական միավորումը:

Ի կատարումն ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1963 թ. փետրվարի 15–ի որոշման՝ ՀԿԿ Կենտկոմն ու ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը 1963 թ. ապրիլի 12–ին ՀԽՍՀ ժողտնտխորհին հանձնարարում են Աբովյան քաղաքում կազմակերպել ռազմական նշանակության ռադիոչափիչ սարքերի արտադրամասեր[74]: 1964 թ. այստեղ բացվեց վարիստորների արտադրության ձեռնարկություն, իսկ 1965 թ.՝ միկրոէլեկտրոնիկայի «Պոզիստոր» ԳԱՄ–ի «Սիրիուս» փորձարարական գործարանը: Ռազմապաշտպանական պատվերներով «Պոզիստոր» ԳԱՄ–ի «Սիրիուս» և «Հատիս» գործարաններում խորհրդային տարիներին արտադրվել են դիոդներ, ռեզիստորներ, հիբրիդային ինտեգրալ միկրոսխեմաներ, կիսահաղորդիչ սարքեր և այլն: Արտադրանքը առաքվել է Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուս, Վրաստան, Ղազախստան, Ուզբեկստան, Ղրղզստան, Մոլդովա, Լիտվա, ԽՍՀՄ այլ հանրապետություններում տեղակայված ՌԱՀ–ի շուրջ 140 գործարաններ և ձեռնարկություններ, զորամասեր և այլն[75]: Երևանի «Ռելե» արտադրական միավորման հիմքի վրա եղեգնաձորում 1967 թ. բացվեց ավիացիոն և հրթիռատիեզերական արդյունաբերությունում օգտագործվող տարբեր սարքերի արտադրման գործարան:

---

[73] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 5, թ. 108, թ. 173–174:
[74] Տե՛ս նույն տեղում, թ. 39:
[75] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, թ. 199–200, գ. 641, թ. 113–120:



© National Library of Armenia

Խորհրդային Հայաստանում կազմակերպված ռազմապաշտպանական արտադրության բարդ և պատասխանատու գործընթացը թեև արձանագրեց նշանակալի հաջողություններ, սակայն, ամբողջությամբ հարթ չէր: Ոլորտում ընդգրկված որոշ ձեռնարկություններ և արտադրամասեր երբեմն թերակատարում էին հաստատված պլանները, թողարկում խոտան և անորակ արտադրանք, ձգձգում մատակարարումները խորհրդային ՌԱՀ–ի ձեռնարկություններին: Այդուհանդերձ, ոլորտում առկա թերություններն ու որոշ բացասական երևույթները, որոնք բնորոշ էին խորհրդային ողջ տնտեսությանը, չեն կարող ստվերել այն վիթխարի աշխատանքը, որ իրականացվել է Խորհրդային Հայաստանում հետպատերազմյան առաջին տասնամյակներին: Այդ շրջանում հանրապետությունն ամբողջությամբ ներգրավվեց խորհրդային ռազմաարդյունաբերական համալիրում, այստեղ ձևավորվեցին ոլորտի մի շարք ձեռնարկություններ և արտադրամասեր, որտեղ թողարկվում էին ռազմական նորագույն բարդ տեխնիկայի և սպառազինության համար ժամանակակից համալրող մասեր և սարքավորումներ, երկրի պաշտպանունակության ամրապնդման և խորհրդային բանակի համար անհրաժեշտ գույք և միջոցներ:

Միաժամանակ հարկ է նշել, որ Հայաստանի տարածքում գտնվող և ոչ մի արտադրական ձեռնարկություն չէր թողարկում զենքի ու զինամթերքի, ռազմական տեխնիկայի և սպառազինության վերջնական արտադրանք: Վերջինս բնորոշ էր նաև խորհրդային մյուս հանրապետություններին՝ բացառությամբ Խորհրդային Ռուսաստանի: Դա խորհրդային ՌԱՀ–ի ընդգծված առանձնահատկություններից էր՝ ռազմական համակարգերի վերջնական ու ամբողջական արտադրանքի բացառումը ոչ միայն մեկ գործարանային համալիրի շրջանակներում, այլև միութենական ազգային մեկ հանրապետությունում: Կենտրոնական իշխանությունների նպատակը հստակ էր՝ որպեսզի ամբողջ երկիրը գտնվի տնտեսական սերտ ու փոխադարձ կոոպերատիվ կապերի մեջ, իսկ հանրապետությունները զերծ մնան ինքնաբավ միավորներ դառնալու հնարավորությունից:

Այսպիսով, հետպատերազմյան առաջին տասնամյակներին ՀԽՍՀ տնտեսության և արդյունաբերության աննախադեպ զարգացումը հիմնականում պայմանավորված էր հանրապետության ռազմապաշտպանական ոլորտի ձեռնարկությունների գործունեությամբ:

**Չորրորդ ենթագլխում՝ «Հանրապետության գիտության ներդրումը խորհրդային ՌԱՀ–ում»**, նշվում է, որ 1950–1960–ական թթ. խորհրդային ռազմաարդյունաբերական համալիրում Խորհրդային Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունների հետ ծանրակշիռ ներգրավվածություն ունեցան նաև գիտահետազոտական, նախագծակոնստրուկտորական ինստիտուտները, լաբորատորիաները, Հայաստանի գիտության՝ հատկապես ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի, ռադիոէլեկտրոնիկայի, էլեկտրամեխանիկայի, մաթեմատիկայի, աստղաֆիզիկայի ճյուղերը: 1950–ական թթ. սկզբին Հայաստանի գիտությունը մասնակից էր դառնում ԽՍՀՄ «միջուկային ծրագրին», որի առաջնահերթությունն անվիճարկելի էր:

ԽՍՀՄ ՌԱՀ–ի համակարգում հետպատերազմյան տարիներին կարևոր նշանակություն ունեցավ 1956 թ. Երևանում բացված Մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը: Նորաստեղծ ինստիտուտի գիտահետազոտական և փորձարարակոնստրուկտորական աշխատանքների առաջնահերթություններն էին էլեկտրոնային հաշվիչ մեքենաների (ԷՀՄ) և դրանց հիման վրա հատուկ նշանակության կառավարման ավտոմատացված համակարգերի (ԿԱՀ, ռուսերեն՝ автоматические системы управления (АСУ)) նախագծումը և ստեղծումը: Դրանք նախատեսվում էր օգտագործել ինֆորմացիայի մշակման և կառավարման լայն շրջանի խնդիրների լուծման համար, առաջին հերթին՝ ԽՍՀՄ զինված



© National Library of Armenia

ուժերում և ռազմապաշտպանական ոլորտում: Խորհրդային տարիներին արտադրվող հաշվողական տեխնիկայի լավագույն օգտագործման և մաթեմատիկական ապահովման ուղղությամբ ԵրՄՄԳՀԻ–ի կոլեկտիվին նշանակալի աջակցություն էր ցույց տալիս հանրապետությունում հաշվողական տեխնիկայի և կիրառական մաթեմատիկայի զարգացման նպատակով Հայաստանի ԳԱ և Երևանի պետական համալսարանի հաշվողական կենտրոնի հիմքի վրա 1957 թ. ստեղծված ՀԽՍՀ ԳԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը (ԻԱՊԻ):

ԽՍՀՄ–ում զենիթահրթիռային նորագույն տեխնիկայի նախագծման և ստեղծման աշխատանքներում ընդգրկվեց 1956 թ. ակադեմիկոս Ա. Իոսիֆյանի նախաձեռնությամբ Հայէլեկտրագործարանի հատուկ կոնստրուկտորական բյուրոյի հիմքի վրա կազմակերպված էլեկտրամեխանիկայի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի (ԷՄՀԳՀԻ) հայկական մասնաճյուղը: Ի կատարումն ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1960 թ. հոկտեմբերի 27–ի որոշման՝ ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Ա. Քոչինյանի կարգադրությամբ մասնաճյուղը հաստատվեց ԽՍՀՄ–ում իբրև գլխամասային կազմակերպություն և ներգրավվեց զորային (ծածկագիրը՝ «Օսա») և ծովային (ծածկագիրը՝ «Օսա–Մ») զենիթային միջոցների, կառավարվող ռեակտիվ զենքի ստեղծման համամիութենական ծրագրում՝ ինքնավար էլեկտրասնուցման համակարգեր մշակելու և պատրաստելու գծով[76]: Մասնաճյուղը 1965 թ. վերակառուցվեց որպես Կոմպլեքսային էլեկտրասարքավորումների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտ (ԿԷՀԳՀԻ): Վերջինիս լաբորատորիայի կազմակերպումն իրականացվեց ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության նախարարության «Հրազդան» գործարանում, որտեղ արտադրվում էին ԿԱՀ–եր[77]:

ԽՍՀՄ–ում գիտության և տեխնիկայի զարգացմանը, գիտություն–արդյունաբերություն կապերի խորացմանը նպաստեցին ԽՄԿԿ Կենտկոմի 1959 թ. հունիսյան պլենումի որոշումները[78]: Պլենումի հրահանգների համաձայն՝ Հայաստանի իշխանությունները համալիր որոշումներ ընդունեցին հանրապետությունում մեխանիկայի, էլեկտրոնիկայի, ռադիոէլեկտրոնիկայի, սարքաշինության և այլ ոլորտներում գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացման, գիտություն–արդյունաբերություն կապերի ամրապնդման մասին[79]: Ինչպես ամբողջ ԽՍՀՄ–ի, այնպես էլ Խորհրդային Հայաստանի տնտեսության և արդյունաբերության զարգացման հիմքում շեշտը դրվում էր արդյունաբերության գիտատար ճյուղերի ստեղծման և զարգացման, գիտություն–տնտեսություն կապերի ամրապնդման վրա: Հանրապետությունում կարճ ժամանակամիջոցում կազմակերպվեցին գիտաարտադրական միավորումներ, գիտահետազոտական նոր ինստիտուտներ և նախագծակոնստրուկտորական բյուրոներ, համամիութենական գիտահետազոտական ինստիտուտների մասնաճյուղեր և այլն: Դրանց թիվը 1965 թ. հասավ 80–ի: Ոլորտը համալրվեց գիտական և ինժեներատեխնիկական բարձրորակ կադրերով, որոնց գործունեության արդյունքում հանրապետությունում շուտով մշակվեցին բազմաթիվ նոր էլեկտրատեխնիկական սարքավորումներ, ստուգիչ–չափող սարքեր, կիսահաղորդիչ և մետաղակերամիկական ապրանքներ, հոսանքի ավտոմատ կարգավորիչներով թեթևաքաշ, բայց մեծ հզորությամբ շարժական էլեկտրակայաններ, տեղական լեռնային ապառ-

[76] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 77, գ. 335, թ. 1–2:
[77] Տե՛ս նույն տեղում, ց. 181, գ. 156, թ. 8:
[78] Մաքևոսյան Հ., նշվ. աշխ., էջ 43:
[79] Տե՛ս Григорьянц А., նշվ. աշխ., էջ 253–254:



© National Library of Armenia

ներից ապակի, ապակյա մանրաթելեր և կիսահաղորդչային նյութեր ստանալու նոր տեխնոլոգիաներ և այլն, կազմակերպվեց դրանց արտադրությունը:

Խորհրդային Հայաստանում 1950–1960–ական թթ. զարգացման առավել բարձր տեմպեր արձանագրվեցին հատկապես ռադիոէլեկտրոնիկայի բնագավառում, որի առաջատար կենտրոն դարձավ, ինչպես նշել ենք, Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը: ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով ինստիտուտի աշխատակիցները սկսեցին նախագծել հատուկ նախանշանակման ապարատածրագրային համալիրներ, կառավարման ավտոմատացված համակարգեր և այլն: Տարիների ընթացքում ինստիտուտը դարձավ ԽՍՀՄ–ում այդ բնագավառի գլխամասային ձեռնարկություն: Ինստիտուտում ստեղծվեցին փորձարարական առանձին արտադրամասեր՝ նախագծված հանգույցների, հիշողության և արտաքին սարքերի, էլեկտրասնուցման աղբյուրների փորձանմուշներ պատրաստելու համար: Արտադրամասերը շուտով միավորվեցին ինստիտուտին կից ստեղծված ԵրՄՄԳՀԻ փորձարարական գործարանում (1960 թ.)[80]: Այստեղ թողարկվում էին սարքերի և մեքենաների միայն փորձարարական նմուշները, իսկ հիմնական արտադրությունը կազմակերպվում էր հանրապետությունից դուրս ԽՍՀՄ ՌԱՀ–ի տարբեր գործարաններում:[81]:

1963 թ. օգոստոսին ԵրՄՄԳՀԻ–ի տնօրեն նշանակվեց Խորհրդային Հայաստանի ապագա վարչապետ, այնուհետև ՀՀ ԳԱԱ նախագահ Ֆադեյ Սարգսյանը: Նրա պաշտոնավարումը ինստիտուտում անմիջապես նշանավորվեց զգալի հաջողությամբ: ԽՍՀՄ ռադիոարդյունաբերության նախարարության հանձնարարականով ինստիտուտը մշակեց և կազմակերպեց դեպի Լուսին թռիչք ղեկավարող սարքի՝ «ԲՌՍ» հեռահաղորդակցական տեղեկության մշակման համակարգի (գլխավոր նախագծող՝ Ա. Քուչուկյան), արտադրությունը[82]: Ինստիտուտում առաջադրվեցին և լուծվեցին գիտատեխնիկական, արտադրական և կազմակերպչական կարևոր խնդիրներ: Դրանք ապահովեցին այնպիսի հեռանկարային ուղղությունների զարգացումը, ինչպիսիք էին երրորդ սերնդի «Նաիրի» շարքի միկրոծրագրային ղեկավարմամբ փոքր մեքենաների ստեղծումը: Վերջինս ապահովեց ինստիտուտի լիարժեք մասնակցությունը ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով հատուկ նշանակության ԿԱՀ–երի ստեղծման պետական ծրագրին[83]:

ԽՍՀՄ ռազմապաշտպանական արդյունաբերության համար մեծ ծավալի գիտական աշխատանքներ են կատարել ՀԽՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը[84], «Ագաթ» կենտրոնական ԳՀԻ–ի Երևանի մասնաճյուղը: Վերջինիս վրա դրված հիմնական խնդիրներն էր՝ ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի նորագույն ռազմական տեխնիկայի համար հատուկ էլեկտրոնային հաշվիչ մեքենաների մշակումն ու ստեղծումը, նաև ԿԱՀ–երի արտադրությունը: «Ագաթ» ԿԳՀԻ Երևանի մասնաճյուղի մշակումներն արտադրության մեջ ներդրվեցին «Բազալտ» սարքաշինական գործարանում[85]:

1960–ական թթ. սկզբից Հայաստանի գիտությունը մասնակից էր դառնում նաև խորհրդային տիեզերական ծրագրին, որտեղ առանցքային տեղ էր գրավում

---

[80] Տե՛ս Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան 50 տարում, էջ 188:
[81] ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 4, թ.108–109:
[82] Տե՛ս Սարգսյան Ֆ., նշվ. աշխ., էջ 60–61:
[83] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, թ. 74:
[84] Տե՛ս նույն տեղում, գ. 641, թ. 102:
[85] Տե՛ս նույն տեղում, գ. 85, թ. 90–91, գ. 76, թ. 8:



© National Library of Armenia

ռազմական բաղադրիչը: Այսպես, ի կատարումն ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1959 թ. դեկտեմբերի 10–ի և 1960 թ. հունիսի 23–ի որոշումների, ՀԿԿ Կենտկոմը և ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը ՀԽՍՀ ԳԱ–ին հաստատում են իբրև ԽՍՀՄ–ում տիեզերական տարածքն իրացնող գլխադասային կազմակերպություններից մեկը[86]:

Հայ գիտնականների, հայաստանյան գիտական կազմակերպությունների արդյունավետ գործունեության շնորհիվ հետպատերազմյան առաջին տասնամյակներին հանրապետությունը ծանրակշիռ մասնակցություն ունեցավ ԽՍՀՄ ռազմատեխնիկական առաջընթացին:

<u>ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝</u> **«Հայաստանը խորհրդային ՌԱՀ–ի համակարգում 1970–1991 թվականներին»**, բաղկացած է երկու ենթագլխից:

<u>Առաջին ենթագլխում՝</u> **«Գիտության ներդրումը խորհրդային ռազմապաշտպանական և տիեզերական արդյունաբերության ոլորտում գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում»**, ցույց է տրվում, որ 1970–ական թվականներին Խորհրդային Միության տնտեսության ամենազարգացած ճյուղը շարունակում էր մնալ ռազմապաշտպանական և տիեզերական արդյունաբերությունը, ուստի պատահական չէ, որ գիտատեխնիկական առաջընթացի կիզակետում հայտնվեցին արդյունաբերության նշված ոլորտի շրջանակներում իրականացվող գիտահետազոտական և փորձարարակոնստրուկտորական աշխատանքները: 1970–ական թթ. սկզբից ԽՍՀՄ ՌԱՀ–ում ավելանում է Խորհրդային Հայաստանի գիտության տարբեր ճյուղերի մասնակցությունը: Մասնավորապես, ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով ՀԽՍՀ ԳԱ ինստիտուտները, Երևանի պետհամալսարանի և Պոլիտեխնիկական ինստիտուտի լաբորատորիաներն ու ամբիոններն իրականացնելու էին շարժվող օբյեկտներ հայտնաբերելու համար ռադիոսարքեր մշակելու, ԷՀՄ–ների և ԿԱՀ–երի կատարելագործմանն ուղղված գիտահետազոտական աշխատանքներ[87]:

1970–ական թթ. սկզբներին ԵրՄՄԳՀԻ–ում հայ գիտնականների ջանքերով հաջողությամբ իրականացվեցին ԽՍՀՄ ռազմաօդային ուժերի, խորհրդային նորագույն ռազմական տեխնիկայի համար ԷՀՄ–ների և ԿԱՀ–երի նոր տեսակների ստեղծման աշխատանքները: Ընդհուպ մինչև ԽՍՀՄ փլուզումը 1991 թ. վերջին՝ ԵրՄՄԳՀԻ–ում ռազմապաշտպանական նշանակություն ունեցող կարևոր աշխատանքներ են կատարվել: Դրանք հիմնականում իրականացվել են ԽՍՀՄ պաշտպանության, ռադիոարդյունաբերության նախարարությունների գլխավորությամբ և կազմակերպչական անմիջական ղեկավարությամբ, միութենական մի շարք գլխադասային և նմանատիպ քույր կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ: Խորհրդային շուրջ 35 տարիների ընթացքում ինստիտուտի գործունեությունը ոչ միայն ապահովեց երկրի ռազմաարդյունաբերության կարիքները, այլև նպաստեց Խորհրդային Հայաստանում արդյունաբերական նվազ մետաղատար և էներգատար նոր ճյուղերի ստեղծմանն ու զարգացմանը, բարձր որակավորում պահանջող աշխատանքով ապահովվեցին հազարավոր մասնագետներ:

ԽՍՀՄ–ում ռադիոֆիզիկայի և ռադիոաստղագիտության, տիեզերական տարածքի հսկողության ասպարեզում գիտական հետազոտությունների, գերհեռու տիեզերական կապերի և ռադիոտեխնիկական հատուկ նշանակության համակարգերի, անտենաօպտիկական կայանքների և ռադիոընդունիչների համասար-

---

[86] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 2, թ. 28–29, 42:
[87] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 103, գ. 11, թ. 1–10:



© National Library of Armenia

քերի ստեղծման խոշոր կենտրոններից էր Հայաստանում կազմակերպված Ռադիոֆիզիկական չափումների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտը (ՌՉՀԳՀԻ)[88]: ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ կառավարության որոշմամբ ինստիտուտը հանդիսանում էր ԽՍՀՄ գլխադասային կազմակերպություններից մեկը՝ ռադիոտեղորոշումային, կապի (այդ թվում տիեզերական) և բոլոր այլ տեսակի վրագետնյա, նավային, ինքնաթիռային և արբանյակային ալեհավաքների բնութագրերի չափման և չափագիտության հարցերով: Խորհրդային տարիներին ռազմական նպատակներով ինստիտուտի արտադրանքի կշիռը միջինում կազմել է 90 %[89]:

1974 թ. ՀԽՍՀ ԳԱ և ԽՍՀՄ ռադիոարդյունաբերության նախարարության համատեղ որոշմամբ՝ «ռազմապաշտպանական կարևոր նշանակություն ունեցող ռադիոսարքեր ստեղծելու նպատակով» Աշտարակում կազմակերպվում է «Կոմետա» ԿԳՀԻ հայաստանյան մասնաճյուղը: Խորհրդային տարիներին մասնաճյուղում մշակվեցին և պատրաստվեցին ռազմապաշտպանական կարևոր կիրառություն ունեցող ռադիոսարքեր՝ սուզանավեր հայտնաբերելու համար բարձր զգայնությամբ բազմաճառագայթային համակարգեր: Դրանք հետագայում կիրառվեցին նաև ռազմական ինքնաթիռներում և տիեզերական համակարգերի լրակազմերում[90]: Տիեզերագիտական հետազոտությունների բնագավառի առաջատար կազմակերպություններից էր «Աստրո» ԳԱՄ–ը: Վերջինիս կազմում 1976 թ. կազմակերպվեց «Օրբիտա» գործարանը[91]:

1970–ական թթ. վերջերին ԽՍՀՄ կառավարության կողմից Խորհրդային Հայաստանը ստացել էր ռազմապաշտպանական կարևոր նշանակություն ունեցող հերթական առաջադրանքը: 1979 թ. ամռանը ԽՄԿԿ Կենտկոմ ուղղված համատեղ նամակում ԽՍՀՄ ՊԱԿ–ի նախագահ Յու. Անդրոպովը, ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանը, ԽՍՀՄ էլեկտրաարդյունաբերության նախարար Ա. Շոկինը նշում են, որ ժամանակակից տեխնիկական միջոցների պատրաստման գործում հայրենական գիտության նվաճումները, մասնավորապես, որակական բարձր հատկանիշներով նորագույն ՄԷՀՄ–ների մշակումները, նախադրյալներ են ստեղծել վերջիններիս օգտագործմամբ մշակելու բարձր հուսալիությամբ ավտոմատացված ազդանշանային ռադիոտեղորոշումային համակարգեր՝ ԽՍՀՄ պետական սահմանները հուսալի պահպանելու և սահմանախախտներին հայտնաբերելու համար: Համաձայն դրա՝ ՀԽՍՀ գիտաարտադրական ձեռնարկություններին հանձնարարվում է ԽՍՀՄ ՊԱԿ–ի հետ կնքված համաձայնագրերի հիման վրա կազմակերպել պետական սահմանների պահպանման տեխնիկական միջոցների արտադրություն: Որպես գլխավոր կատարող հաստատվում է ԽՍՀՄ էլեկտրոնային արդյունաբերության նախարարության «Պոզիստոր» արտադրական միավորումը, որտեղ ստեղծվելու էր հատուկ կոնստրուկտորական բյուրո[92]: Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված քայլերի արդյունքում «Պոզիստոր» արտադրական միավորումում, նաև «Գրանիտ», «Աստրո» և այլ ձեռնարկություններում ու մասնագիտացված կոնստրուկտորական բյուրոներում աշխույժ աշխատանքներ են ծավալվում: Դրանց արդյունքում մշակվում է հեռահար ղեկավարմամբ ավտոմատացված «Կրեդո» ռադիոտեղորոշումային կայանը՝

---

88 Պետրոսյան Վ., Անտոն Քոչինյանի ժամանակը, էջ 370–371: Տե՛ս նաև՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 49, գ. 48, թ. 69–70:
89 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, թ. 187:
90 Տե՛ս նույն տեղում, գ. 411, թ. 45–46:
91 Տե՛ս նույն տեղում, գ. 186, թ. 23:
92 Տե՛ս նույն տեղում, գ. 226, թ. 23–26:



© National Library of Armenia

վրագետնյա և ստորջրյա նպատակային շարժումները հայտնաբերելու համար: Մշակվում է օպտիկահեռուստատեսային դիտարկման համակարգ, որը հսկելու էր սահմանապահ ուղեկալի տարածքն օրվա լուսավոր ժամանակ, նաև՝ սահմանախախտներին հայտնաբերելու համար ինֆրակարմիր ազդանշանային սարք և այլն: Արդեն 1981 թ. ամռանը համակարգերը փորձարկվում են խորհրդաթուրքական և խորհրդաչինական պետական սահմանի պահպանման որոշակի հատվածներում: Փորձարկումների արդյունքում «էլեկտրոնիկա ՊՎ–2» ծածկագրով համակարգը կատարելագործվում և դրվում է շարային արտադրության[93]:

1980–ական թթ. ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում մշակվել են տարբեր հաճախականություններով ռադիոչափիչ սարքերի համակարգեր, որոնք օգտագործվեցին խորհրդային տիեզերական և հատուկ կապի միջոցներում: Դրանցից «Չկար» համակարգը կիրառվում էր հակառակորդի շարժվող տրանսպորտային միջոցները հայտնաբերելու համար: Ինստիտուտի ընդհանուր աշխատանքների մեջ ռազմապաշտպանական նշանակություն ունեցող աշխատանքների ծավալը խորհրդային տարիներին կազմել է 75 %[94]:

1970–1980–ական թթ. խորհրդային ՌԱՀ–ի համակարգում ներգրավված էին Հայաստանի գիտության նաև այլ ուղղությունները՝ քիմիան, միկրոկենսաբանությունը, դեղագիտությունը և այլն: ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1970 թ. սեպտեմբերի 1–ի որոշումով՝ ԽՍՀՄ պաշտպանության նախարարության ռազմաբժշկագիտական կենրոնական վարչության պատվերով ՀԽՍՀ ԳԱ Ա. Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում իրականացվեցին հետազոտություններ օրգանական թունավորող նյութերից ԽՍՀՄ ԶՈւ անձնակազմի և բնակչության պաշտպանվածության ապահովման նպատակով: Վարչության պատվերով ինստիտուտը 1971–1972 թթ. համագործակցում էր Լատվիայի ԳԱ օրգանական սինթեզի ինստիտուտի հետ դեղագործական «Տոնուս–LUS–Ն» միջոցներ ստեղծելու գործում: Դրանք միտված էին էքստրեմալ պայմաններում մարտական գործողությունների ժամանակ բարձրացնել զինվորների օրգանիզմի դիմադրողականությունը, ապահովել անձնակազմի ռազմունակության երկարատև պահպանումը և այլն[95]:

ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահության ռազմաարդյունաբերական հանձնաժողովի 1979 թ. դեկտեմբերի 28–ի որոշմամբ՝ ՀԽՍՀ ԳԱ միկրոբիոլոգիայի ինստիտուտում պաշտպանական արդյունաբերության ճյուղերի համար կազմակերպվել է ոչ մետաղական նյութերի առաջնային ատեստացիոն կենտրոն: Այստեղ աշխատանքներ են իրականացվել խորհրդային «Բուրան» առաջին բազմակի օգտագործմամբ համակարգի համար[96]:

1980–ական թթ. Հայաստանում ստեղծվեցին խորհրդային ՌԱՀ–ը սպասարկող գիտահետազոտական և գիտաարտադրական նոր կազմակերպություններ: Երևանում կազմակերպվում է «Ավիահամալիր» հայկական արտադրական միավորման «Սիգնալ» փորձարարակոնստրուկտորական բյուրոն[97]: Խորհրդային տարիներին այստեղ մշակվել են տարբեր էլեկտրական սարքեր, ինչպես քաղաքացիական, այնպես էլ ռազմական հատուկ տեխնիկայի համար, այդ թվում՝ ֆիքսատորներ, լուսատուներ, Տու–204 ինքնաթիռների համար կենսաապահով-

[93] Տե՛ս նույն տեղում, թ. 26ա–29:
[94] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, թ. 196–197:
[95] Տե՛ս նույն տեղում, ց. 103, գ. 11, թ. 1–10:
[96] Տե՛ս նույն տեղում, գ. 367, թ. 12:
[97] Տե՛ս նույն տեղում, գ. 443, թ. 61–62:



© National Library of Armenia

ման տարբեր մասեր և այլն[98]: Երևանում հիմնված ԽՍՀՄ նավաշինության նախարարության Մոսկվայի ԿԳՀԻ–ի «Ալֆա» մասնաճյուղը մասնագիտացել էր ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի համար հաշվիչ տեխնիկայի սարքերի և համակարգերի մշակումների մեջ: Այստեղ ստեղծվել են սուզանավերի հրամանատարներին և անձնակազմին վարժեցնելու համար տակտիկական վարժասարքեր՝ մարզիչ–նմանարկիչներ և այլն[99]:

ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1987 թ. օգոստոսի 3–ի որոշումով Երևանում կազմակերպվեց ԽՍՀՄ կապի միջոցների արդյունաբերության նախարարության «Վոլնա» գիտաարտադրական միավորման մասնաճյուղը: Այստեղ մինչև 1991 թ. իրականացվեցին ռազմապաշտպանական նշանակության «ՄՍ–21» համակարգի ստեղծման «խիստ գաղտնի» գիտահետազոտական աշխատանքներ[100]:

ԽՍՀՄ մայրամուտին Հայաստանում գործում էին նաև մի քանի տասնյակ այլ գիտահետազոտական և փորձարարակոնստրուկտորական ինստիտուտներ և կազմակերպություններ, գիտաարտադրական միավորումներ, որտեղ իրականացվում էին ռազմապաշտպանական նշանակության կարևոր աշխատանքներ:

Այսպիսով, ակներև է, որ ռազմապաշտպանական նպատակներով ԷՀՄ–ների, ՄԷՀՄ–ների, ԿԱՀ–երի, ռադիոէլեկտրոնային և էլեկտրական հատուկ սարքերի, մասերի և հանգույցների, քիմիական, դեղագործական, կենսաբանական միջոցների մշակման, ստեղծման և արտադրման ոլորտում Խորհրդային Հայաստանի, հայ գիտնականների և մասնագետների նվաճումները բացառիկ են և տպավորիչ: Զուր չէ, որ մեր հանրապետությունը ԽՍՀՄ–ում վաստակել էր խորհրդային «Սիլիկոնային հովտի» անուր համբավը:

<u>**Երկրորդ ենթագլխում**</u>՝ **«Հանրապետության ռազմապաշտպանական արդյունաբերությունը խորհրդային վերջին տասնամյակներին»**, նշվում է, որ Խորհրդային Հայաստանում տեղակայված ԽՍՀՄ ՌԱՀ–ի էլեկտրոնային, էլեկտրատեխնիկական, ռադիոտեխնիկական, հաշվողական տեխնիկայի, սարքաշինական, քիմիական և այլ գործարաններն ու ձեռնարկությունները 1970–ական թթ. սկզբից շարունակեցին ապահովել հանրապետության արդյունաբերության զարգացման բարձր ցուցանիշները: Հայաստանում հիմնվեցին խորհրդային ՌԱՀ–ը սպասարկող նոր ձեռնարկություններ և կազմակերպություններ: 1973 թ. հոկտեմբերի 12–ին ԽՄԿԿ Կենտկոմ ուղղված գրությունում ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Պ. Անիսիմովը հայտնում էր, որ հանրապետությունում գործում էին ԽՍՀՄ պաշտպանական, ավիացիոն, նավաշինության, միջին մեքենաշինության, էլեկտրոնային և ռադիոտեխնիկական արդյունաբերության տասնյակ գործարաններ, ձեռնարկություններ և կազմակերպություններ, մասնագիտացված և հատուկ կոնստրուկտորական բյուրոներ և այլն[101]:

ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1971 թ. մայիսի 26–ի և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի 1971 թ. հունիսի 14–ի որոշումների համաձայն՝ 1974 թ. Երևանում (Զովեժում) սկսվում է միութենական «Պրոմսվյազ» («Արդկապ») գործարանի նոր արտադրամասերի շինարարությունը[102]: «Արդկապ» գործարանի հատուկ արտադրանքը խորհրդային տարիներին առաքվել է ոչ միայն միութենական հանրապետություններում տեղակայված գործարաններ և ձեռնարկություններ, այլև

---

[98] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, թ. 204–205:
[99] Տե՛ս նույն տեղում, գ. 675, թ. 60–67ա:
[100] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 28, թ. 54–59, նաև՝ ֆ. 113, ց. 181, գ. 620, թ. 175:
[101] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 53, գ. 73, թ. 101:
[102] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 181, գ. 85, թ. 72:



© National Library of Armenia

Բուլղարիա, Լեհաստան, Չեխոսլովակիա, Թուրքիա, Մոնղոլիա, Վիետնամ, եմեն և այլ երկրներ[103]: 1970–ական թթ. Ջրվեժ ավանն աստիճանաբար վերածվեց ռազմաարդյունաբերական ձեռնարկությունների խոշոր հանգույցի: Վերջինս հրատապ էր դարձրել ձեռնարկությունների գործունեության գաղտնիության ռեժիմի ապահովման խնդիրը[104]:

1973–1974 թթ. շահագործման են հանձնվում Երևանում կազմակերպված ավտոմատացված կառավարման համակարգերի «Հրազդան» գործարանի առաջին հերթի շինարարության արտադրական տարածքները: Այստեղ թռչող ապարատների, ավիացիոն սարքերի շարային թողարկում է կազմակերպվում[105]: Ռադիոտեղորոշումային կայանների համար շարժական ԿԱՀ–երի արտադրություն կազմակերպվեց նաև ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1977 թ. հոկտեմբերի 12–ի որոշմամբ վերակառուցված Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատում[106]: Վերջինիս բազայի հիման վրա 1978 թ. ստեղծվեց «Հրազդանմեքենա» արտադրական միավորումը: ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով «Հրազդանմեքենա» միավորումը մասնակցել է ԽՍՀՄ հակաօդային պաշտպանության համակարգի ստեղծմանը: Այստեղ թողարկվել են ռադիոէլեկտրոնային սարքավորումներ հակաօդային պաշտպանության «ՕՍԱ», «ԿՈՒԲ», «Ս–75» զենիթահրթիռային համակարգերի ռադիոտեղորոշումային կայանների համար, խորհրդային զինված ուժերի տեխնիկական միջոցների ապահովման համար շարժական և ստացիոնար կապի միջոցներ[107]:

ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1977 թ. որոշումով ԽՍՀՄ նավաշինության արդյունաբերության նախարարության Երևանի «Էլեկտրասարք» հայկական արտադրական միավորումը ներգրավված էր ԽՍՀՄ սարքաշինության, ավտոմատացման միջոցների և կառավարման համակարգերի նախարարության գծով օդային բարձիկներով և ստորջրյա թևերով նավերի ստեղծման և կառուցման միութենական ծրագրում[108]:

1970–1980–ական թթ. ռազմապաշտպանական արտադրության մեծ ծավալի աշխատանքներ են իրականացվել Երևանի «Էլեկտրոն» հայկական արտադրական միավորումում, որը տարիների ընթացքում դարձավ ԽՍՀՄ ռադիոտեխնիկական խոշոր ձեռնարկություններից մեկը: ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով «Էլեկտրոն» միավորման ձեռնարկությունները խորհրդային տարիներին թողարկել են մենաշնորհային արտադրանք՝ ԽՍՀՄ ռազմաօդային ուժերի ինքնաթիռների թռիչքները և դրանց անվտանգությունն ապահովող, երկրի ցամաքային և օդային սահմաններն ու ուղիները վերահսկող ռադիոտեղորոշումային կայանների կառավարման ավտոմատացված համակարգերը համալրող ռադիոէլեկտրոնային սարքավորումներ և մասեր[109]:

«ՀԽՍՀ ժողտնտեսության հետագա զարգացման միջոցառումների մասին» ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1975 թ. ապրիլի 16–ի որոշմամբ՝ ԽՍՀՄ 10–րդ հնգամյա պլանի (1976–1980) կապիտալ հատկացումներով նախատեսվում էր ՀԽՍՀ–ում, հատկապես հեռավոր շրջաններում, էլեկտրական և կապի միջոցների արտադրանքի նոր գործարանների և մասնաճյուղերի կառու-

---

[103] Տե՛ս նույն տեղում, գ. 55, թ. 48:
[104] Տե՛ս նույն տեղում, գ. 186, թ. 52:
[105] Տե՛ս նույն տեղում, գ. 482, թ. 61–62:
[106] Տե՛ս Саркисян А., նշվ. աշխ., հ. 2, էջ 205–206:
[107] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 660, թ. 207:
[108] Տե՛ս նույն տեղում, գ. 186, թ. 15–19:
[109] Տե՛ս նույն տեղում, գ. 620, թ. 179, գ. 660, թ. 10–12 :



© National Library of Armenia

ցում[110]: ԽՍՀՄ կապի միջոցների արդյունաբերության նախարարության գծով նախատեսվում էր 1979–1980 թթ. Դիլիջանի «Իմպուլս» գործարանի մասնաճյուղերի շինարարություն Կրասնոսելսկ (Ճամբարակ) և Համզաչիման գյուղերում: Մարտունիում 1980 թ. սկսվելու էր տվյալների փոխանցման ապարատուրաների գործարանի շինարարությունը[111]: ՀԽՍՀ Նախարարների խորհրդի որոշումներով Կապանի, Գորիսի, Աշտարակի և Ապարանի շրջանների բնակչությանն աշխատանքով ապահովելու նպատակով նախատեսվում էր ընդարձակել Կապանում գործող կոնդենսատորների «Դիպոլ» արտադրական միավորման մասնաճյուղը, նոր մասնաճյուղեր կազմակերպել Տաթև և Օշական գյուղերում[112]: «Դիպոլ» արտադրական միավորման ընդհանուր արտադրանքի ծավալում ռազմապաշտպանական արտադրանքը խորհրդային տարիներին կազմել է 90,3 %[113]:

1980–ական թթ. սկզբներից խորհրդային ՌԱՀ–ը ծանր ժամանակներ էր ապրում, ձեռնարկություններում թույլ էր արտադրական կարգապահությունը, նվազում էին աշխատանքի արտադրողականության տեմպերը, ավելանում էր արտադրանքի խոտանը, ամբողջությամբ չէին կատարվում նախանշված առաջադրանքներն ու մատակարարումները և այլն: Խորհրդային տնտեսությանը բնորոշ բացասական երևույթներն առավել խորացան 1980–ական թթ. կեսերից, երբ երկրի տնտեսությունը, այդ թվում ՌԱՀ–ը, ծանր վիճակում հայտնվեց: Դրանք վերացնելուն ուղղված խորհրդային իշխանությունների ձեռնարկած քայլերը, սակայն, հիմնականում արդյունավետ չէին և դրական տեղաշարժերի չհանգեցրեցին: Էլ ավելի խորանալով՝ դրանք շարունակվեցին մինչև ԽՍՀՄ փլուզումը:

1980–ական թթ. երկրորդ կեսին բոլոր առումներով ծանր էր դրությունը հատկապես Խորհրդային Հայաստանում: Արդյունաբերական արտադրանքի 65 կարևորագույն տեսակներից չէր կատարվում գրեթե յուրաքանչյուր երկրորդի պլանը: 1988 թ. պայմանագրային մատակարարումներով հանրապետությունը վերջին տեղն էր գրավում ամբողջ ԽՍՀՄ–ում: 1981–1985 թթ. միջին տարեկանի համեմատությամբ 1986–1987 թթ. արդյունաբերության մեջ խոտանի պատճառով առաջացած կորուստներն աճել էին 27 %–ով[114]: Հայաստանի անասելի ծանր դրությունն աղետալի դարձեց 1988 թ. դեկտեմբերի 7–ի Սպիտակի ավերիչ երկրաշարժը, երբ մասնակի կամ ամբողջությամբ քանդվեցին և դադարեցին գործել արդյունաբերական ավելի քան 170 գործարաններ, ձեռնարկություններ և արտադրամասեր: Դրանց մեջ մեծ թիվ էին կազմում նաև ռազմապաշտպանական ոլորտի ձեռնարկությունները[115]:

1985–1991 թթ. ԽՍՀՄ–ում իրագործվող «վերակառուցման» քաղաքականությունը բերեց խորհրդային ՌԱՀ–ի ամբողջական վերափոխմանը, սկսվեց ռազմաարդյունաբերական ոլորտի ձեռնարկությունների փոխարկումը քաղաքացիական արտադրության (կոնվերսիա): Հայաստանի ռազմապաշտպանական ձեռնարկություններում կոնվերսիայից բխող միջոցառումներ կազմակերպելու և իրականացնելու նպատակով ՀԽՍՀ Նախարարների խորհրդի կողմից ստեղծվեց հատուկ հանձնաժողով, որն ուսումնասիրությունների արդյունքում 1989 թ. դեկտեմբերի 1–ին Նախարարների խորհուրդ ներկայացրեց հանրապետության արդյու-

---

110 Տե՛ս նույն տեղում, գ. 200, թ. 28:
111 Տե՛ս նույն տեղում, գ. 137, թ. 9:
112 Տե՛ս նույն տեղում, ց. 185, գ. 281, թ. 1–2, գ. 299, թ. 1, ց. 181, գ. 292, թ. 103:
113 Տե՛ս նույն տեղում, ց. 181, գ. 620, թ. 15, գ. 641, թ. 136:
114 Տե՛ս «Սովետական Հայաստան», 17 սեպտեմբերի, 1988, թիվ 225–226:
115 Տե՛ս Хачатрян К., Великий друг армянского народа – Н.И. Рыжков, Е., 2004, էջ 103, 104, 114:



© National Library of Armenia

նաբերության պաշտպանական ճյուղի մի շարք ձեռնարկությունների հաջորդական կոնվերսիայի առաջարկությունների փաթեթ[116]:

ԽՍՀՄ փլուզման շրջանում համամիութենական պաշտպանական պատվերների, ֆինանսների փաստացի բացակայության, ռազմական նշանակության բազմաթիվ ապրանքների արտադրությունից հանելու և այլ պատճառներով խորհրդային ՌԱՀ–ի հայաստանյան ձեռնարկությունների և կազմակերպությունների գերակշիռ մասը 1991 թ. վերջին կա՛մ պարապուրդի մեջ էր, կա՛մ նրանց ծանրաբեռնվածությունը գտնվում էր ծայրահեղ ցածր մակարդակի վրա:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ** ի մի են բերված ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

- ԽՍՀՄ ՌԱՀ–ը՝ արտադրական ձեռնարկությունների, գիտահետազոտական և նախագծակոնստրուկտորական մասնագիտացված կազմակերպությունների մի համակարգ էր, որն իրականացնում էր ռազմական տեխնիկայի, սպառազինության և ռազմամթերքի, ռազմատեխնիկական միջոցների մշակման, արտադրության ու նորոգման պետական պատվերներ: Խորհրդային ՌԱՀ–ի նյութատեխնիկական և տնտեսական գլխավոր բաղադրիչն էր ռազմապաշտպանական արտադրությունը, ուստի «ՌԱՀ» հասկացությունը ԽՍՀՄ–ում համարժեք էր «ռազմապաշտպանական արդյունաբերություն», «պաշտպանական արդյունաբերություն», «պաշտպանական արդյունաբերական համալիր» հասկացություններին:
- 1920–1930–ական թթ. ԽՍՀՄ–ում վճռական քայլեր ձեռնարկվեցին ռազմապաշտպանական արդյունաբերության ստեղծման և զարգացման, նրա կառավարման համակարգի կատարելագործման ուղղությամբ: Գործընթացի արդյունքում՝ արդեն Երկրորդ աշխարհամարտի սկզբին և Հայրենական պատերազմի նախաշեմին ԽՍՀՄ–ը հիմնականում լուծել էր երկրի ռազմապաշտպանական արդյունաբերության ստեղծման կարևոր հիմնախնդիրը:
- 1920–1930–ական թթ. դարձան Խորհրդային Հայաստանի արդյունաբերության աննախադեպ զարգացման տարիներ, կառուցվեցին ու շահագործման հանձնվեցին նորագույն սարքավորումներով համալրված արդյունաբերական տասնյակ գործարաններ և ձեռնարկություններ: Արդեն 1930–ական թթ. վերջին Հայաստանում առկա էր բազմաճյուղ արդյունաբերություն, ինչը հնարավորություն տվեց կենտրոնական իշխանություններին Հայրենական պատերազմի սկզբին Հայաստանն ընդգրկել ԽՍՀՄ–ում ձևավորվող ՌԱՀ–ում:
- Ինչպես ամբողջ ԽՍՀՄ–ում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում նախապատերազմյան տարիներին կարևորվում էր ժողտնտեսությունում ռազմապաշտպանական միջոցառումների իրականացման ռազմավարությունը: ՀՍԽՀ ռազմապաշտպանական միջոցառումների ծրագիրը չէր առանձնացվում հանրապետության տնտեսության զարգացման ամբողջական ծրագրից, իսկ դրա իրականացումը լուրջ խթան հանդիսացավ Խորհրդային Հայաստանի հետագա զարգացման և պաշտպանունակության ամրապնդման համար:
- Երկրորդ համաշխարհային պատերազի տարիներին հանդիսանալով ԽՍՀՄ սահմանամերձ տարածք և ռազմական գործողությունների հավանական թատերաբեմ՝ Խորհրդային Հայաստանը կարևոր տեղ էր զբաղեցնում ԽՍՀՄ ռազմապաշտպանական միջոցառումներում: Հայաստանը, նրա պաշտպանունակության, ռազմական պատրաստվածության, պաշտպանական արդյունաբերության ներուժի հզորացման խնդիրները կարևորվում էին խորհրդային ղեկավարության կողմից: Հանրապետությունում կուտակվեցին ռազմական զգալի ուժեր և միջոց-

---

[116] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, թ. 14–19:



© National Library of Armenia

ներ, ներմուծվեցին մեծ քանակությամբ սարքավորումներ և ռազմավարական հումք: Վերջինս իրատապ դարձրեց վերակառուցելու Հայաստանի արդյունաբերական գործարանները և ձեռնարկությունները՝ ռազմաարդյունաբերական պատվերներ կատարելու և վնասված ռազմական տեխնիկան վերանորոգելու համար:

- Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից Խորհրդային Հայաստանն ամենայն պատասխանատվությամբ մասնակից դարձավ ԽՍՀՄ ռազմապաշտպանական աղյունաբերության առջև ԽՍՀՄ ՊՊԿ–ի կողմից դրված մեծածավալ խնդիրների լուծմանը: Ռազմապաշտպանական նշանակության արտադրանքի, զենքի ու ռազմամթերքի թողարկմանը մասնակցեցին հանրապետության արդյունաբերության գրեթե բոլոր ճյուղերը, շուրջ հինգ տասնյակ գործարաններ ու ֆաբրիկաներ, մեխանիկական արհեստանոցներ, այլ ձեռնարկություններ: Հանրապետության արդյունաբերության ռազմականացման գործընթացն ամբողջությամբ ավարտվեց 1942 թ. կեսերին: Այդ շրջանից է, որ արձանագրվեց զենքի և զինամթերքի, դրանց մասերի, իրետանային գույքի և բանակային կապի միջոցների մասերի, ռազմահանդերձանքի, ռազմական այլ արտադրանքի պատվերների կտրուկ աճ:
- Ստալինգրադի ճակատամարտում խորհրդային զորքերի հաղթանակից հետո, երբ վերացավ գերմանաֆաշիստական ուժերի և Թուրքիայի կողմից Կովկասին ու Անդրկովկասին սպառնացող վտանգը, Հայաստանի ձեռնարկություններին տրվող ռազմական պատվերները հետզհետե նվազեցին: 1943 թվականից մինչև պատերազմի ավարտը հանրապետությունում ամբողջությամբ դադարեցվեց վաշտային ականանետների, զենքի մասերի, ռազմամթերքի որոշ տեսակների, իրետանային և ինժեներական գույքի արտադրությունը: Պատերազմի ավարտական փուլում՝ 1945 թ. առաջին ամիսներին, հանրապետությունում ռազմաճակատի համար զենք և ռազմամթերք չի արտադրվել:
- Հանրագումարի բերելով պատերազմի տարիներին ՀԽՍՀ արդյունաբերության զարգացման, նրանում պաշտպանական ոլորտի ձեռնարկությունների ձևավորման, հանրապետությունում ռազմապաշտպանական արտադրանքի թողարկման հիմնական արդյունքները՝ նշենք. Խորհրդային Հայաստանում կառուցվեցին և գործադրվեցին 30 նոր ձեռնարկություններ և 110 արտադրամասեր, պատերազմի տարիներին ՀԽՍՀ արդյունաբերությունն իրացրեց արտադրանքի շուրջ 300 նոր տեսակի թողարկում, որոնց զգալի մասն ուներ ռազմապաշտպանական նշանակության: Արդյունաբերությունը թողարկեց 10 անուն զինամթերք, 1՝ զենք (վաշտային ականանետներ), 6՝ կապի միջոցներ, 47՝ գումակատնտեսական և իրային գույք, 3՝ ինժեներական ծառայության և 6՝ իրետանային գույք, 20՝ քիմիական նյութ, զինվորական հագուստի տասնյակ տեսակներ և այլն: Ռազմապաշտպանական հիմնական արտադրության մեջ զբաղվածների թվաքանակը, համածայն պաշտոնական տվյալների, հասնում էր 3600–ի:
- Նախապատերազմյան և պատերազմի տարիներին հանրապետության ռազմապաշտպանական ոլորտի աշխատանքներում ծանրակշիռ մասնակցություն ունեցավ հանրապետության գիտությունը: ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի (Արմֆան) հիմքի վրա 1943 թ. նոյեմբերին Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի հիմնադրումով հայ գիտնականներն առավել հիմնարար աշխատանքներ ծավալեցին երկրի բնական պաշարների հայտնաբերման և արտադրության մեջ ներդնելու, ռազմապաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների առջև ծառացած արտադրական գործընթացների կատարելագործման և այլ խնդիրների լուծման ուղղությամբ:



© National Library of Armenia

• Հայրենական պատերազմի ռազմաճակատներում հերոսական մասնակցության, ԽՍՀՄ հաղթանակի համար հարյուրհազարավոր զոհեր տալու դիմաց Խորհրդային Հայաստանը ստացավ «գերմանական ռազմավարի» իր չափաբաժինը: Հետպատերազմյան առաջին տարիներին գերմանական տարբեր գործարաններից և ձեռնարկություններից ստացված հարյուրավոր հաստոցների ու սարքավորումների, մետաղական կոնստրուկցիաների, այլ իզորությունների շնորհիվ հանրապետության արդյունաբերության ձեռնարկությունները վերազինվեցին և համալրվեցին թանկարժեք ու արդիական նոր սարքավորումներով: Դա հնարավորություն տվեց հանրապետությունում զարգացնել արդյունաբերական նոր ճյուղերը՝ էլեկտրամեքենաշինությունը, էլեկտրատեխնիկական սարքաշինությունը և այլն, ամրապնդվեց երկրի ներգրավվածությունը խորհրդային ռազմաարդյունաբերական համալիրում:

• Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո միջազգային իրադրությունն աշխարհում շարունակում էր լարված մնալ: Դա նպաստեց հետպատերազմյան առաջին տասնամյակներին խորհրդային ռազմապաշտպանական արդյունաբերության աննախադեպ զարգացմանը: Ընդհանուր առմամբ՝ Երկրորդ աշխարհամարտին հաջորդող առաջին երկու տասնամյակները հանդիսացան ԽՍՀՄ–ում ռազմաարդյունաբերական համալիրի ձևավորման ավարտի շրջանը: Այդ տարիներին մշակվեցին ռազմական նոր ռազմավարության հիմքերը, ստեղծվեց գիտական և արտադրական հզոր հենարան սպառազինության բոլոր տեսակների և համակարգերի հետագա զարգացման համար, կատարելագործվեց խորհրդային ՌԱՀ–ի կառավարման համակարգը, որը գրեթե անփոփոխ տեսքով գոյություն ունեցավ մինչև ԽՍՀՄ–ի կազմալուծումը:

• Հետպատերազմյան առաջին տասնամյակներին Խորհրդային Հայաստանում արագացված տեմպերով իրագործվում է ռազմական սպառման ապրանքների նոր տեսակների արտադրությունը, առաջին հերթին զարկ է տրվում էլեկտրամեքենաշինության և սարքաշինության, էլեկտրատեխնիկական և ռադիոտեխնիկական արդյունաբերության զարգացմանը: Արդեն հետպատերազմյան 13 տարիների ընթացքում հանրապետությունում կառուցված և շահագործման հանձնված 200 նոր արդյունաբերական ձեռնարկությունների զգալի մասը սպասարկում էր երկրի ռազմաարդյունաբերական ոլորտը:

• Հետպատերազմյան տարիներին խորհրդային ռազմապաշտպանական ոլորտում շարունակեց ծանրակշիռ ներդրում ունենալ Հայաստանի քիմիական արդյունաբերությունը: Կիրովականի ազոտային հանքանյութերի գործարանին կից 1946 թ. կառուցված էլեկտրոլիզի գործարանում 1950–ական թթ. սկսվեց սինթետիկ կորունդի, մելամինի, երկրի ռազմապաշտպանական կարիքների, խորհրդային բանակի և ռազմական տեխնիկայի համար նախատեսված քիմիական այլ նյութերի արտադրությունը: Այստեղ էր արտադրվում ատոմային և ջրածնային ռումբերի արտադրության համար անհրաժեշտ բաղադրամաս հանդիսացող, այսպես կոչված, «ծանր ջուրը», առանց որի հնարավոր չէր արձակել նշված ռումբերը:

• 1960 թ. սկսած Խորհրդային Հայաստանի մասնակցությունը ԽՍՀՄ ՌԱՀ–ում ձեռք է բերում որակական նոր, առավել կանոնակարգված և հաստատագրված բնույթ: Այսուհետ ՀԽՍՀ–ի յուրաքանչյուր հաշվետու տարվա ռազմական արտադրանքի վերաբերյալ ստուգիչ–հսկիչ առաջադրանքներն ընդունվում են ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի փակ նիստերում: ՀԽՍՀ–ում ռազմական տեխնիկայի և սպառազինության, գույքի և միջոցների արտադրության պլաները յուրաքանչյուր առանձին տարվա համար պարբերա-



© National Library of Armenia

բար ճշգրտվում և որոշ փոփոխություններով ու լրացումներով հաստատվում էին ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի որոշումներով:

- 1960–ական թթ. հանրապետությունն ամբողջությամբ ներգրավվեց խորհրդային ռազմաարդյունաբերական համալիրում, այստեղ ձևավորվեցին ոլորտի մի շարք ձեռնարկություններ և արտադրամասեր, որտեղ թողարկվում էին ռազմական նորագույն տեխնիկայի և սպառազինության համար համալրող մասեր և սարքավորումներ, խորհրդային բանակի համար ռազմամթերքների մասեր. հակատանկային և ինժեներական ականների պատյաններ, պայթուցիչներ, ռազմական գույքի այլ տեսակներ ու միջոցներ: Հայաստանի ռազմապաշտպանական ոլորտի առաջատար Հայէլեկտրագործարանում արտադրվեցին վրագետնյա հատուկ էլեկտրաուժային սարքավորումներ, շարժական տրանսֆորմատորային ենթակայաններ և գազատուրբինային ագրեգատներ՝ խորհրդային զենիթահրթիռային նորագույն համակարգերը և ռադիոտեղորոշումային կայանները («Կրուգ», «Կուբ», «Դալ», «Ս–75Մ» («Վոլխով»), «Ս–120», «Ս–125» («Նևա»), «Ս–200»), լրակազմելու համար:
- 1970–1980–ական թթ. ռազմապաշտպանական արտադրության մեծ ծավալի աշխատանքներ են իրականացվել Երևանի «Էլեկտրոն» հայկական արտադրական միավորումում, որը տարիների ընթացքում դարձավ ԽՍՀՄ ռադիոտեխնիկական խոշոր ձեռնարկություններից մեկը: Վերջինիս արտադրական մասնաճյուղերը գործում էին Հայաստանի տարբեր շրջաններում: ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով «Էլեկտրոն» միավորման ձեռնարկությունները խորհրդային տարիներին թողարկել են մենաշնորհային արտադրանք՝ ԽՍՀՄ ռազմաօդային ուժերի ինքնաթիռների թռիչքները և դրանց անվտանգությունն ապահովող, երկրի ցամաքային և օդային սահմաններն ու ուղիները վերահսկող ռադիոտեղորոշումային կայանների ԿԱՀ–երը համալրող ռադիոէլեկտրոնային սարքավորումներ և մասեր:
- ԽՍՀՄ սարքաշինության, ավտոմատացման միջոցների և կառավարման համակարգերի նախարարության գծով օդային բարձիկներով և ստորջրյա թևերով նավերի ստեղծման և կառուցման միութենական ծրագրում էր ներգրավված Երևանի «Էլեկտրասարք» արտադրական միավորումը: Թռչող ապարատների համար ԿԱՀ–երի արտադրություն կազմակերպվեց Երևանի «Հրազդան» գործարանում: Արդիական ռազմական արտադրություն կազմակերպելու նպատակով գործարանի հիմքի վրա ստեղծվեց Հայաստանի «Ավիահամալիր» արտադրական միավորումը:
- ԽՍՀՄ հակաօդային պաշտպանության համակարգի ստեղծմանն է մասնակցել «Հրազդանմեքենա» միավորումը: Այստեղ թողարկվել են ռադիոէլեկտրոնային սարքավորումներ հակաօդային պաշտպանության «ՕՍԱ», «ԿՈՒԲ», «Ս–75» զենիթահրթիռային համակարգերի ռադիոտեղորոշումային կայանների համար, շարժական և ստացիոնար կապի միջոցներ խորհրդային զինված ուժերի տեխնիկական միջոցների ապահովման համար:
- ԽՍՀՄ ՌԱՀ–ի գործարաններից և ձեռնարկություններից բացի՝ Խորհրդային Հայաստանում արտադրված ռազմատեխնիկական գույքի, հատուկ միջոցների առանձին հանգույցների և լրակազմ ապրանքների որոշ տեսակներ արտահանվել են սոցիալիստական և տնտեսական առումով թույլ զարգացած երկրներ՝ Բուլղարիա, Հունգարիա, Լեհաստան, Ռումինիա, ԳԴՀ, Չեխոսլովակիա, Հարավսլավիա, Իրաք, Իրան, Եգիպտոս, Վիետնամ, Հյուսիսային Կորեա, Մոնղոլիա, Հնդկաստան, Ցեյլոն, Եմեն, Գվինեա, Կուբա, Գանա և այլն:



© National Library of Armenia

• Հայաստանի իշխանությունները կարևորում և խթանում էին ռազմապաշտպանական ոլորտի արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների մասնաճյուղերի և առանձին արտադրամասերի ստեղծումը հանրապետության տարբեր շրջաններում: Ժամանակակից արդյունաբերական նոր ձեռնարկությունների կառուցումը նպաստում էր հեռավոր շրջանների, քաղաքների և գյուղական բնակավայրերի աննախադեպ առաջընթացին և զարգացմանը, տեղերում սոցիալ–տնտեսական, կոմունալ–կենցաղային պայմանների բարելավմանը, գործազրկության վերացմանը, բնակչության աճին: Կենտրոնական իշխանությունների հետ համատեղ ձեռնարկած համալիր միջոցառումների արդյունքում խորհրդային ՌԱՀ–ը սպասարկող ձեռնարկություններ հիմնվեցին Լենինականում, Արթիկում, Մարալիկում, Ստեփանավանում, Կիրովականում, Դիլիջանում, Իջևանում, Կրասնոսելսկում, Բերդում, Ապարանում, Հրազդանում, Չարենցավանում, Աբովյանում, Նոր Հաճնում, Արզնիում, Էջմիածնում, Աշտարակում, Օշականում, Վեդիում, Սևանում, Կամոյում, Վարդենիսում, Մարտունիում, Կապանում, Մեղրիում, Գորիսում, Տաթևում, Տեղում, Սիսիանում, Գոռհայքում, Դաստակերտում և այլն:

• Հետպատերազմյան տասնամյակներին խորհրդային ՌԱՀ–ի համակարգում ՀԽՍՀ արդյունաբերական ձեռնարկությունների հետ մեկտեղ ծանրակշիռ ներգրավվածություն ունեցան հանրապետության գիտահետազոտական, նախագծակոնստրուկտորական հաստատությունները, գիտության ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի, մաթեմատիկայի, մեխանիկայի, ռադիոէլեկտրոնիկայի, էլեկտրամեխանիկայի, աստղաֆիզիկայի, քիմիայի, միկրոկենսաբանության, դեղագիտության և այլ ճյուղերը: 1960–ական թթ. սկզբից Հայաստանի գիտությունը մասնակից էր դառնում խորհրդային տիեզերական ծրագրին, որտեղ առանցքային տեղ էր գրավում ռազմական բաղադրիչը:

• Խորհրդային Հայաստանում առավել բարձր ցուցանիշներ արձանագրվեցին հատկապես ռադիոէլեկտրոնիկայի բնագավառում, որի առաջատար կենտրոն դարձավ Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը (ԵրՄՄԳՀԻ): Ընդհուպ մինչև ԽՍՀՄ–ի փլուզումը ԵրՄՄԳՀԻ–ում ռազմապաշտպանական նշանակություն ունեցող կարևոր աշխատանքներ իրականացվեցին ԽՍՀՄ ռազմաօդային ուժերի, խորհրդային նորագույն ռազմական տեխնիկայի համար ԷՀՄ–ների և ԿԱՀ–երի նոր տեսակների ստեղծման ուղղությամբ: Խորհրդային շուրջ 35 տարիների ընթացքում ինստիտուտի գործունեությունը ոչ միայն ապահովեց երկրի ռազմաարդյունաբերության կարիքները, այլև նպաստեց հանրապետությունում արդյունաբերական նվազ մետաղատար և էներգատար նոր ճյուղերի ստեղծմանն ու զարգացմանը:

• Խորհրդային տարիներին «Կոմետա» ԿԳՀԻ հայաստանյան մասնաճյուղում մշակվեցին և պատրաստվեցին ռազմապաշտպանական կարևոր կիրառություն ունեցող ռադիոսարքեր՝ սուզանավեր հայտնաբերելու համար բարձր զգայնությամբ բազմաճառագայթային համակարգեր: Դրանք հետագայում կիրառվեցին նաև ռազմական ինքնաթիռներում և տիեզերական համակարգերի լրակազմերում: 1970–1980–ական թթ. մեծ ծավալների աշխատանքներ են իրականացվել ՀԽՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում, Երևանի «Ազաթ», «Ալֆա», «Գամմա», «Սևան», «Վոլնա» գիտահետազոտական և գիտաարտադրական կազմակերպություններում, «Սիգնալ» կոնստրուկտորական բյուրոյում, Լենինականի «Մագնոն» հատուկ կոնստրուկտորական տեխնոլոգիական բյուրոյում և այլն:

• Ռազմապաշտպանական նպատակներով, խորհրդային ռեակտիվ և հրթիռային նորագույն տեխնիկան համալրելու համար ԷՀՄ–ների, ՄԷՀՄ–ների, ԿԱՀ–



© National Library of Armenia

երի, ղեկավարման վահանակների, էլեկտրատեխնիկական սարքավորումների, ռադիոէլեկտրոնային հատուկ այլ սարքերի, միջոցների և հանգույցների, քիմիական, դեղագործական, կենսաբանական միջոցների մշակման և ստեղծման ոլորտում Խորհրդային Հայաստանի, հայ գիտնականների և մասնագետների նվաճումները բացառիկ են: Իրավամբ հանրապետությունը ԽՍՀՄ–ում վաստակել էր խորհրդային «Սիլիկոնային հովտի» անուր համբավը:

- Հայաստանի տարածքում գտնվող ոչ մի արտադրական ձեռնարկություն չէր թողարկում զենքի ու զինամթերքի, ռազմական տեխնիկայի և սպառազինության վերջնական արտադրանք: Դա խորհրդային ՌԱՀ–ի ընդգծված առանձնահատկություններից էր՝ ռազմական համակարգերի վերջնական ու ամբողջական արտադրանքի բացառումը ոչ միայն մեկ գործարանային համալիրի շրջանակներում, այլև միութենական մեկ հանրապետությունում, բացառությամբ Խորհրդային Ռուսաստանի: Կենտրոնական իշխանությունների նպատակը հստակ էր՝ որպեսզի ամբողջ երկիրը գտնվի տնտեսական սերտ ու փոխադարձ կոոպերատիվ կապերի մեջ, իսկ հանրապետությունները զերծ մնան ինքնաբավ միավորներ դառնալու հնարավորությունից:
- Խորհրդային Հայաստանում կազմակերպված ռազմապաշտպանական արտադրության բարդ և պատասխանատու գործընթացը թեև արձանագրեց նշանակալի հաջողություններ, սակայն ամբողջությամբ հարթ չէր: Ոլորտում ընդգրկված որոշ գործարաններ և արտադրամասեր երբեմն թերակատարում էին հաստատված պլանները, թողարկում խոտան և անորակ արտադրանք, ձգձգում մատակարարումները խորհրդային ՌԱՀ–ի ձեռնարկություններին: Խորհրդային տնտեսությանը բնորոշ բացասական այդ երևույթներն առավել խորացան 1980–ական թթ. սկզբներից, երբ տնտեսությունը, այդ թվում ՌԱՀ–ը, ծանր ժամանակներ էին ապրում: Առկա բացասական երևույթները վերացնելուն ուղղված խորհրդային իշխանությունների կողմից ձեռնարկված քայլերը, սակայն, հիմնականում արդյունավետ չէին և դրական տեղաշարժերի չհանգեցրին: Էլ ավելի խորանալով՝ դրանք շարունակվեցին մինչև ԽՍՀՄ–ի փլուզումը:
- 1985–1991 թթ. «վերակառուցման» քաղաքականությունը բերեց ԽՍՀՄ ՌԱՀ–ի ամբողջական վերափոխմանը, սկսվեց ռազմական արդյունաբերության ոլորտի ձեռնարկությունների փոխարկումը քաղաքացիական արտադրության (կոնվերսիա): Կոնվերսիայի ծրագրերում բացահայտ առաջնությունը տրվեց սպառողական ապրանքների և կենցաղային տեխնիկայի թողարկմանը: Սակայն միանգամայն մրցունակ լինելով ռազմապաշտպանական արտադրանքի ոլորտում, խորհրդային ՌԱՀ–ը բոլորովին անմրցունակ գտնվեց բնակչության համար լայն օգտագործման ապրանքների արտադրման ոլորտում:
- Խորհրդային Հայաստանում իրականացվեցին ռազմապաշտպանական, քաղաքացիական պաշտպանության, մոբիլիզացիոն պաշարների ստեղծման և կուտակման մի շարք միջոցառումներ, կառուցվեցին ապաստարաններ և այլն: Հատուկ ժամանակներում ՀԽՍՀ տարածքում ռազմավարական նշանակության ավտոճանապարհների օգտագործման պատրաստվածությունը բարձրացնելու, նրանցով հրթիռային և ռազմական այլ տեխնիկայի թողունակությունն ապահովելու նպատակով ՀԽՍՀ կառավարության որոշումներով և հանձնարարականներով վերանորոգվեցին հանրապետության գլխավոր մայրուղիներն ու ճանապարհները: ՀԽՍՀ հակաօդային պաշտպանությունն ապահովելու նպատակով հանրապետության տարածքում տեղակայված էր հակաօդային պաշտպանության N զորամասի զենիթահրթիռային N բրիգադը: Վերջինիս կազմի մեջ մտնում էր զենիթահրթիռային 9 դիվիզիոն, որոնցից 3–ը զինված էին հրթիռներով և իրականաց-



© National Library of Armenia

նում էին մարտական հերթապահություն: Զենիթահրթիռային բրիգադը համալրված էր № 75 և № 125 համակարգերով, որոնք համապատասխանաբար ներառում էին մինչև 70 և 50 կմ թռիչքի հեռավորությամբ մարտական հրթիռներ և ռադիոտեղորոշումային կայաններ: Մինչև 1988 թ. № 75 համակարգի հրթիռները զինված էին միջուկային մարտագլխիկներով:

Այսպիսով, Խորհրդային Հայաստանում ռազմաարդյունաբերության զարգացումը կարևոր խթան հանդիսացավ հանրապետության տնտեսության և արդյունաբերության զարգացման, սոցիալ–տնտեսական խնդիրների լուծման, բնակչության աճի և զբաղվածության ապահովման համար: Հանրապետության արտադրական բոլոր հզորությունների շուրջ 40 %–ն այս կամ այն չափով սպասարկում էր խորհրդային ռազմական արդյունաբերությանը: ՀԽՍՀ–ն ապահովում էր համամիութենական ՌԱՀ–ի բարձրտեխնոլոգիական, ինտելեկտուալ հատվածը: Հանրապետությունը ԽՍՀՄ–ում առաջատար դիրքեր էր զբաղեցնում համակարգչային, միկրոէլեկտրոնային, ռադիոէլեկտրոնային, օպտիկաֆիզիկական, ՀՕՊ–ի և ավիացիոն–տիեզերական համակարգերի համալրման բաղադրիչների մշակման և արտադրության ոլորտում: Ռազմապաշտպանական ոլորտի զարգացվածության ընդհանուր մակարդակով Հայաստանը՝ Խորհրդային Ռուսաստանից, Ուկրաինայից և Բելառուսից հետո ԽՍՀՄ–ում զբաղեցնում էր 4–րդ պատվավոր տեղը: ԽՍՀՄ ՌԱՀ–ի համակարգում ներգրավված Խորհրդային Հայաստանի աշխատողների ընդհանուր թվական աստիճանը, համեմատած հանրապետության բնակչության թվի հետ, հասնում էր գրեթե 1 %–ի, և այդ ցուցանիշով Խորհրդային Հայաստանը զիջում էր միայն վերը նշված խորհրդային հանրապետություններին:

Իրավամբ, խորհրդային տարիներին Հայաստանի տնտեսության և արդյունաբերության, գիտության աննախադեպ զարգացումը մեծ չափով պայմանավորված էր հանրապետության ռազմապաշտպանական ոլորտի ձեռնարկությունների գործունեությամբ:



© National Library of Armenia

**Ատենախոսության հիմնական բովանդակությունը ներկայացված է հեղինակի հետևյալ հրապարակումներում`**

ա. Մենագրություն

1. Հայաստանը ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի համակարգում (1922–1991 թթ.), ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., Ե., 2015, 345 էջ:

բ. Հոդվածներ

1. Советско–турецкие отношения на начальном этапе холодной войны и Армянский вопрос (1945–1949 гг.), “Вестник РАУ”, Е., 2003, № 1, с. 50–57.
2. Армянский вопрос в сфере советско–турецкого противостояния в годы Второй мировой войны и на начальном этапе холодной войны. //Актуальные проблемы Второй мировой и Великой Отечественной войн /к 65–летию Великой Победы//, “Беларуская навука”, Минск, 2010, с. 326–337.
3. Խորհրդային Հայաստանը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ԽՍՀՄ ռազմական նախապատրաստությունների ոլորտում, «Հայոց պատմության հարցեր» (Գիտական հոդվածների ժողովածու), ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., հ. 12, Ե., 2011, էջ 255–269:
4. Խորհրդային պաշտպանական արդյունաբերության և դրա կառավարման համակարգի զարգացման հիմնափուլերը (1920–1930–ական թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 2–3, Ե., 2012, էջ 32–41:
5. Ռազմապաշտպանական արդյունաբերության ձևավորման նախադրյալները Խորհրդային Հայաստանում (1920–1930–ական թթ.), «Պատմաբանասիրական հանդես», թիվ 3, Ե., 2012, էջ 53–65:
6. Արդյունաբերության ռազմականացումը և ռազմական արտադրության կազմակերպումը Խորհրդային Հայաստանում Հայրենական Մեծ պատերազմի առաջին ամիսներին, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (Գիտական հոդվածների ժողովածու), ԵՊՀ հրատ., հ. Գ, Ե., 2012, էջ 95–102:
7. Ռազմապաշտպանական արտադրությունը Հայաստանում Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 4, Ե., 2012, էջ 12–32:
8. Խորհրդային Հայաստանի պաշտպանական արդյունաբերության առաջնեկի` թիվ 447 գործարանի հիմնադրման և շահագործման պատմությունից, «Հայոց պատմության հարցեր» (Գիտական հոդվածների ժողովածու), ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., հ. 13, Ե., 2012, էջ 262–279:
9. Հայաստանի ռազմավարը Երկրորդ համաշխարհային պատերազմում, «Վէմ» համահայկական հանդես, թիվ 4, Ե., 2013, էջ 107–117:
10. Военно–оборонное производство в Советской Армении в годы Великой Отечественной войны, “Историческое пространство (Проблемы истории стран СНГ)”, Изд. Международной Ассоциации Институтов истории стран СНГ, М., 2013, с. 240–258.
11. Խորհրդային ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման առաջնահերթությունները և կառավարման համակարգը հետպատերազմյան առաջին տասնամյակներին (1945–1960–ական թթ.), «Հայոց պատմության հարցեր» (Գիտական հոդվածների ժողովածու), ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., հ. 15, Ե., 2014, էջ 240–267:
12. Հայաստանի երկրորդ (խորհրդային) հանրապետության պատմության հիմնահարցերի ուսումնասիրության արդի վիճակը, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի (17–19 հոկտեմբերի, 2013) զեկուցումների ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», Ե., 2014, էջ 101–105:



© National Library of Armenia

13. Հայ գիտության ներդրումը ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական ոլորտում հետպատերազմական առաջին տասնամյակներին (1950–1960–ական թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 2, Ե., 2015, էջ 77–86:
14. Ռազմապաշտպանական արտադրությունը Խորհրդային Հայաստանում հետպատերազմյան առաջին տասնամյակներին (1946–1970 թթ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», թիվ 123, Ե., 2015, էջ 372–389:
15. Հայաստանի գիտության ներդրումը ԽՍՀՄ ռազմապաշտպանական և տիեզերական արդյունաբերության ոլորտում (1970–1980–ական թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 3, Ե., 2015, էջ 10–27:
16. Խորհրդային Հայաստանի ռազմապաշտպանական արդյունաբերությունը 1970–1991 թվականներին, «Հայոց պատմության հարցեր» (Գիտական հոդվածների ժողովածու), ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., հ. 16, Ե., 2015, էջ 267–303:



© National Library of Armenia

ХАЧАТРЯН КАРЕН ГАМЛЕТОВИЧ

# АРМЕНИЯ В СИСТЕМЕ ВОЕННО–ПРОМЫШЛЕННОГО КОМПЛЕКСА СССР (1922–1991 гг.)

Диссертация на соискание ученой степени доктора исторических наук по специальности 07.00.01 “История Армении”.

Защита состоится 28–го декабря 2015 г., в 14$^{00}$ на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте истории Национальной академии наук РА, по адресу: 0019, г. Ереван, проспект Маршала Баграмяна 24/4.

## Р Е З Ю М Е

В диссертации на основе многочисленных рассекреченных архивных документов, исторических свидетельств, опубликованных сборников документов и материалов, а также научной литературы впервые в армянской историографии обобщенно и всесторонне изучается проблема участия отраслей военно–оборонной промышленности и науки Советской Армении в военно–промышленном комплексе (ВПК) СССР в 1922–1991 годах. В исследовании рассмотрены также вопросы организации и проведения в Советской Армении военно–оборонных мероприятий.

Кроме научно–практического значения актуальность исследования выражается в том, что в сфере организации и развития ВПК Республика Армения в рамках ОДКБ тесно сотрудничает с некоторыми странами бывшего СССР, и, в первую очередь – с Российской Федерацией. Страны осуществляют комплексные мероприятия по укреплению обороноспособности Армении, в частности – создается совместная система противовоздушной обороны (ПВО).

Диссертация состоит из введения, четырех глав, заключения, списка использованных источников и литературы.

В введении обосновывается актуальность и насущность темы, цель и задачи, научно–теоретическая новизна, научное и практическое значение исследования, представлена историография и степень изученности темы.

На основе критического изучения исторических фактов в работе показывается, что в 1920–1930–ых гг. Советский Союз предпринял решительные шаги для становления и развития военно–оборонной промышленности страны, и уже к началу Великой Отечественной войны задача создания советского ВПК была практически решена.

Создание разветвленной промышленности в Советской Армении в 1920–1930–ых гг. и ее развитие стало основой для вовлечения республики в военно–оборонные мероприятия Закавказского военного округа СССР и в оборонно–промышленный комплекс страны в годы Второй мировой и Великой Отечественной войн. За годы войны в военно–оборонном производстве были задействованы почти все отрасли промышленности республики, около 50 заводов и фабрик, механических мастерских и других предприятий. Ведущими предприятиями военно–оборонной отрасли производства республики стали Ереванский машиностроительный завод имени Ф. Дзержинского, Ереванский химкомбинат имени С. Кирова (№ 742), Ереванский завод № 722, Ереванский самолетостроительный завод № 447 и др. Всего за годы войны на предприятиях военно–оборонной промышленности республики было произведено 10 видов боеприпасов (зажигательные авиабомбы, снаряды, противотанковые и противопехотные мины,



© National Library of Armenia

ручные гранаты и т.д.), 1 – вооружения (ротные минометы), 6 – средств армейской связи, 47 видов вещевого снаряжения, 20 – химпродуктов, 9 – инженерно–технического и артиллерийского имущества, несколько десятков видов военного обмундирования и т.д.

Весомый вклад в организацию военно–оборонной промышленности республики и военного производства в годы войны внесли ученые и наука Советской Армении.

После окончания Второй мировой войны Советская Армения получила свою часть немецких военных контрибуций. Благодаря полученному оборудованию немецких заводов и фабрик промышленные предприятия республики были переоснащены и пополнены дорогостоящим совершенным оборудованием. Это дало возможность развить в республике такие отрасли промышленности как электромашиностроение, станкостроение, приборостроение и др., резко повысить вовлеченность республики в советский ВПК.

В послевоенные годы на предприятиях военно–оборонной отрасли промышленности Советской Армении было налажено прозводство электронных вычислительных машин, автоматизированных систем управления, специального наземного электросилового оборудования, средств радиоэлектронной и космической связи, других изделий и средств для комплектования новейшей ракетной и реактивной техники, радиолокационных станций и зенитно–ракетных комплексов противовоздушной обороны: “Круг”, “Куб”, “Даль”, “С–125” (“Волхов”), “С–120”, (“Нева”), “С–200” и др., советских военных кораблей и подводных лодок, авиационно–космических аппаратов, для нужд Вооруженных Сил и советского ВПК.

В условиях научно–технического прогресса послевоенных лет в системе советского ВПК наряду с промышленными предприятиями Советской Армении весомое участие приняли ученые и наука республики. Армения обеспечивала специфическую часть общесоюзного комплекса – как правило, интеллектуальную, а также сектор электроники. В СССР Армения прочно утвердила за собой роль советской “Силиконовой долины”. Около 40 % всех производственных мощностей республики в той или иной мере обслуживали ВПК СССР. На десятках предприятий, научно–исследовательских и научно–промышленных организаций, вовлеченных в данную отрасль, было разработано и выпущено до 30–40 % общего объема всесоюзной военной и космической радиоэлектроники. По общему уровню развития военно–оборонной отрасли Армения занимала в СССР 4–е почетное место, после России, Украины и Белоруссии. По объему производства электротехнического машиностроения Армения была 2–й, а по приборостроению – 5–й.

Одновременно надо отметить, что ни одно из промышленных предприятий Армении не выпускало конечную военную продукцию. Это было явной особенностью советского ВПК – исключение завершенного и целостного производства военных систем и военной техники не только в рамках одного заводского комплекса, но и в одной союзной республике, за исключением Советской России.

Проведение в Советской Армении военно–оборонных мероприятий способствовало укреплению обороноспособности и безопасности республики, а развитие военно–оборонных отраслей промышленности послужило серьезным стимулом для небывалого развития экономики и промышленности республики, создания новых промышленных центров, решения социальных проблем, обеспечения занятости населения, роста ее благосостояния, научно–технического прогресса.

В заключении диссертации обобщены и представлены основные выводы исследования**.**



© National Library of Armenia

KHACHATRYAN KAREN HAMLET

ARMENIA IN THE MILITARY–INDUSTRIAL COMPLEX OF THE USSR (1922–1991)

Dissertation for the degree of the Doctor of Sciences (History) on the specialization of "History of Armenia" 07.00.01

The defense of the dissertation will be held on December 28, 2015, $14^{00}$ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/4).

## SUMMARY

For the first time in the Armenian historiography the problem of participation of the branches of the Military Defense industry and science of Soviet Armenia in the military–industrial complex (MIC) of the USSR in 1922–1991 is generalized and comprehensively studued on the basis of numerous declassified archival documents, historical evidence, published collections of documents and materials, as well as the scientific literature. The study also examines the questions of organization and implementation of military and defensive mesures in Soviet Armenian.

Besides scientific and practical value of the research its actuality is reflected in the fact that in the sphere of organization and development of the military–industrial complex of the Republic of Armenia it is working closely with some of the countries of the former Soviet Union, and, in the first place with the Russian Federation within the framework of the Collective Security Treaty Organization. The countries realize complex mesures to strengthen the defense capability of the Republic of Armenia, in particular a system of air defense is in the process of creation.

The dissertation consists of introduction, four chapters, conclusion, list of primary sources and literature.

In the introduction are presented the relevance and actuality of the theme, purpose and objectives, scientific and theoretical novelty, scientific and practical significance of the study, historiography and the degree of scrutiny topics.

On the basis of a critical examination of the historical facts we show in the paper that in the 1920–1930–s the Soviet Union took decisive steps for the formation and development of the Military Defense industry, and by the beginning of the Great Patriotic War the task of creating of the Soviet military–industrial complex was practically solved.

In 1920–1930–s creation of the branched industry in Soviet Armenia and its development had become a basis for the involvement of the republic in the military–defensive measures of the Transcaucasian Military District of the USSR and the military–industrial complex of the country during the Second World War and the Great Patriotic War. During the war years almost all branches of the industry of the Armenian SSR, about 50 factories and plants, mechanical shops and other enterprises were set in motion in the Military Defense industries. The leading enterprises of the Military and Defense industries of the republic became the Yerevan Machine Building Plant named after F. Dzerzhinsky, Yerevan Chemical Plant named after C. Kirov (№ 742), the Yerevan plant N 722, the Yerevan aircraft construction plant N 447 and others. During the war the enterprises of the



© National Library of Armenia

Military Defense industry of the republic produced 10 types of ammunition (incendiary bombs, shells, anti–tank and anti–personnel mines, hand grenades, etc.), 1 – armament (mortars), 6 –means of army communication, 47 kinds of clothing equipment, 20 – chemical products, 9 – engineering and artillery assets, a few dozen types of military uniforms, etc.

During the years of war a significant contribution to the organization of the Military Defense industry of the republic and military production was made by the scientists and science of Soviet Armenia.

After the end of the Second World War Soviet Armenia received its part from German war reparations. Due to the received equipment from the German factories and plants, the industrial enterprises of the republic had been refitted and replenished by costly and perfect equipment. This gave the opportunity to develop such branches of industry in the republic as the electrical engineering, machine–tool construction, instrument making, etc., as well as sharply increase the involvement of the republic in the Soviet military–industrial comples.

In the postwar years at the enterprises of the Military Defense branch of industries of Soviet Armenia was established production of electronic computers, automated control systems, a special ground–electric power equipment, radio–electronic and space communications, other products and resources for kitting as modern rocket and jet technics, radar stations and anti–aircraft missile defense systems, "Crug", "Cube", "Dal", "S–125" ("Volkhov"), "P–120" ("Neva"), "P–200" et al., as well as Soviet warships and submarines, aircraft and space apparatuses, and generally for the needs of the Armed Forces and the Soviet military–industrial complex.

In conditions of the scientific and technical progress of the postwar years in the system of the Soviet military–defense complex along with industrial enterprises of Soviet Armenia, scientists and science of the republic had a weighty share. Armenia provided a specific part of the All–Union complex – as a rule, intellectual as well as the electronics' sector. Armenia firmly established its role as the Soviet "Silicon Valley" in the USSR. About 40% of the total production capacity of the republic in one way or another served Soviet military–industrial complex. Dozens of companies, research and scientific and industrial organizations involved in this sector designed and produced up to 30–40 % of the total All–Union military and space electronics. Due to the general level of the development of the Military Defense sector of Armenia it assumed the 4th honorable place in the Soviet Union, after Russia, Ukraine and Belarus. In terms of the production of electro–technical engineering Armenia was the 2nd, and instrumen making – the 5th.

At the same time it should be noted that none of the industrial enterprises of Armenia issued a final military product. This was a clear feature of the Soviet military–industrial complex – complete exclusion of the integral production of weapon systems and military equipment not only within a single factory complex, but also in any union republic, with the exception of Soviet Russia.

The realization of military and defensive activities in Soviet Armenian helped to strengthen the defense capability and security of the republic, and the growth of the Military and Defense industry served as a serious impetus for an unprecedented economic and industrial development of the republic: creation of new industrial centers, solution of social problems, providing employment of the population, the growth of its wealth, scientific and technical progress.

The main findings and results of the study are summarized and presented in the conclusion of the dissertation.



© National Library of Armenia